№ 12 (153) XIV ՏԱՐԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1904

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆ ՅԱՐԻԶՄԻ ԴԷՄ

Մի քանի շաբաթ սրանից առաջ Պարիզում տեղի ունեցաւ Ռուսաստանի զանազան ազգերի դիմադրական և յեղափոխական կազմակերպութիւնների խորհրդաժողով։ Այլևայլ նկատումներով՝ դեկտեմբերի 1-ին միայն նրա որոշումները հրատարակութեան տրուեցին համաշխարհային մամուլի մէջ։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ևս ունեցաւ այդ ժողովում իր պատգամաւորը, և ահա այսօր, պայմանաժամը հասնելուց յետոյ, ներկայացնում ենք հայ հասարակութիւնը՝ եօթնօրեայ խորհրդակցութիւնների արդիւնք՝ ժողովի վաւերացրած արձանագրութիւնը։

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ
ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ
(ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ)

Ֆինլանդական ընդդիմադիր կուսակցութեան մի քանի անդամների նախաձեռնութեամբ՝ հետևեալ խմբումներն ու կազմակերպութիւնները հրաւէր ստացան մասնակցելու ընդհանուր խորհրդակցութեան մէջ՝ հասնելու համար այնպիսի նպատակների, որոնք կարող են ընդհանուր լինել այդ բոլոր կազմակերպութիւնների համար։

1) Ռուսաց Սոցիալ-դէմոկրատական Բանւորական Կուսակցութիւն։
2) Սոցիալիստ-յեղափոխականների Կուսակցութիւն։
3) Լեհական Սոցիալիստական Կուսակցութիւն։
4) Հրէական Ընդհանուր Բանւորական Դաշնակցութիւն։
5) Լեհաստանի և Լիտվայի Սոցիալ-դէմոկրատիա։
6) Լեհական „Պրոլետարիատ" Սոցիալիստական Կուսակցութիւն։
7) Լիտվայի Սոցիալ-դէմոկրատական Կուսակցութիւն։
8) Լատիշ Սոցիալ-դէմոկրատական Բանւորական Կուսակցութիւն։
9) Լատիշ Սոցիալ-դէմոկրատների Դաշնակցութիւն։
10) Ֆինլանդական Բանւորական Կուսակցութիւն։
11) Ուկրայնեան Սոցիալիստական Կուսակցութիւն։
12) Ուկրայնեան Յեղափոխական Կուսակցութիւն։
13) Վրաց Սոցիալիստ-Յեղափոխական-Ֆէդէրալիստների Կուսակցութիւն։
14) Հայ Սոցիալ-դէմոկրատական Բանւորական Կազմակերպութիւն։
15) Բէլոռուսական Սոցիալիստական Գրօմադա։
16) Միութիւն Ազատման (Ռուս Սահմանադրականներ)։
17) Լեհական Ազգայնական Լիգա։
18) Ֆինլանդական Կուսակցութիւն Գործօն Դիմադրութեան և
19) Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն։

Յիշատակուած կազմակերպութիւններից, որոնք սկզբունքով յայտնել էին իրենց համաձայնութիւնը մասնակցելու Խորհրդաժողովին, հաւաքուեցին հետևեալ ութ կազմակերպութիւնների պատուիրակները.

Սոցիալիստ-Յեղափոխ. Կուսակցութեան, Ռուսաց Սահմանադրականների, Լեհական Սոց. Կուսակցութեան, Լատիշ Սոց.-դէմ. Բան. Կուսակցութեան, Վրաց Սոց.-Յեղ.-Ֆէդէր. Կուսակցութեան, Լեհ. ազգ. Լիգայի, Ֆինլանդական Գործօն Դիմադ. Կուսակցութեան և Հայ Յեղափոխ. Դաշնակցութեան։

Երեք կազմակերպութիւններ (Ռուս. Սոց.-դէմ.-Բան. Կուսակցութիւն, Լեհաստանի և Լիտվայի Սոց.-դէմոկրատիա և Ուկրայնեան Յեղափոխ. Կուսակցութիւն) ուղարկեցին պատճառաբանուած մերժումն։

Մնացած կազմակերպութիւնները, Խորհրդաժողովի համար առայժմ անյայտ պատճառներով, ժամանակին չղրկեցին իրենց պատուիրակները։

Խորհրդաժողովին ներկայացող կազմակերպութիւնները յանգեցին այն եզրակացութիւններին, որոնք առաջ են բերուած ներկայ արձանագրութեան մէջ և բնագրում վաւերացուած են խորհրդակցութիւններին մասնակցող բոլոր պատուիրակների ստորագրութիւններով. Միայն Լատիշ Սոցիալ-դէմ. Բան. Կուսակցութեան ներկայացուցիչը յայտնեց, որ ընդունում է Ժողովի բոլոր եզրակացութիւնները *ad referendum*։

Ամենից առաջ՝ Ժողովը համաձայնեց դնելու իբրև հիմք բոլոր յետագայ դատողութիւնների՝ հետևեալ ղեկավարող շարժառիթներն ու սկզբունքները.

1) Ռուսաստանի քաղաքական կեանքի ներկայ վայրկեանում քաղաքական կռիւը առանձնապէս սուր բնաւորութիւն ունի։ Մի կողմից՝ ընդդիմադիր և յեղափոխական ուժերի արագ աճումը, միւս կողմից՝ գոյութիւն ունեցող իշխանութեան իրական կազմալուծումը և տիրող ռէժիմի այլասերումը՝ դարձնում են նրա վերացման հարցը և՛ կենսական և՛ ժամանակայարմար։ Ուստի և այդ ռէժիմի դէմ կռուող զանազան կազմակերպութիւնների համաձայնած գործունէութիւնը դառնում է առանձնապէս ցանկալի։

2) Դիմադրական և յեղափոխական կազմակերպութիւնները համաձայնեցնելու ներկայ փորձը յայտնւում է իբրև առաջինը, և ցանկալի է դնել նրան այնպիսի պայմաններում, որ նրա հետևանքը չլինի լոկ արձանագրումը ամենքին յայտնի տարաձայնութիւնների, որոնք բաժանում են կուսակցութիւնները, այլ պարզաբանումը այն ընդհանուր կէտերի, որոնք կարող են հիմք ծառայել համաձայնած գործունէութեան համար՝ ներկայ պատմական վայրկեանում։

3) Այդ նպատակին հասնելու համար, Խորհրդաժողովը անհրաժեշտ է ընդունում՝

ա) Սահմանափակել ներկայ խորհրդակցութեան նիւթը, հաստատելով այն ընդհանուր գաղափարների ու նպատակների մինիմումը (նւազագոյն չափը), որը արդէն ներկայումս մտնում է խորհրդակցող կուսակցութիւնների ծրագիրների մէջ և որի պարզաբանումը թողնում է անձեռնմխելի՝ ամէն մի առանձին կուսակցութեան ծրագրի բոլոր կէտերը և տաքտիկական բոլոր ձևերը։

բ) Եւ սակայն, գաղափարների ու նպատակների այդ ընդհանուր պաշարը սահմանելու միջոցին՝ չբաւականանալ միայն արձանագրելով մի քանի շատ թէ քիչ վերացական սկզբունքների ընդհանրութիւնը, այլև, ըստ կարելւոյն, հասնել կոնկրետ համաձայնութեան՝ քաղաքական կռիւ մի քանի հերթական հարցերի առիթով։

Հիմնելով այդպէս ընդունած ընդհանուր դրութիւնների վրայ, Ժողովը քննեց համաձայնութեան և համերաշխ գործակցութեան հնարաւոր կէտերը, գլխաւորապէս, հետևեալ երեք տեսակէտներով.

ա) ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄ
բ) ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՀԱՐՑ
գ) ԿՌԻԻ ՄԻԶՈՑՆԵՐԻ ԽՆԴԻՐ

Քաղաքական վերակազմութեան նկատմամբ, որին հաւասարապէս ձգտում են ներկայացուած բոլոր կազմակերպութիւնները, հնարաւոր եղաւ հաստատել, որ կռիւ ընդհանուր նպատակ կարող է լինել ոչ միայն բռնապետութեան տապալման բացասական գործը և ոչ միայն քաղաքական ազատութեան ու հիմնական իրաւունքների ընդհանուր բանաձևը, այլ որ զանազան խորհրդակցող կուսակցութիւնների համար ընդհանուր կէտ է յայտնւում նաև ձգտումը՝ իրականացնելու քաղաքական վերակազմութիւնը ռամկավարական ոգով։

Որպէս շօշափելի ապացոյց այդ ընդհանուր ձգտման՝ երևում է բոլոր կուսակցութիւնների կողմից հաստատուած այն հանգամանքը՝ որ ժողովրդական ներկայացուցչութեան հիմնական սկզբունք պիտի լինի ընդհանուր ընտրողական իրաւունքը։

Ազգայնական խնդրի վերաբերմամբ՝ յայտնւեց ընդհանուր ցանկութիւն՝ կիրառել ռամկավարական գաղափարը նաև այդ խնդրի լուծման համար հաստատելիք ընդհանուր հայեցակէտի վրայ։ Մանրամասն քննութեան չ'ենթարկելով վիճելի կէտը այն դերի մասին, որ ազգայնական խնդրին վիճակուած է խաղալ ռուսաց վերակազմեալ թագաւորութեան ապագայ պետական իրաւունքի սահմանաւորման մէջ,—Ժողովը, այնուամենայնիւ, հնարաւոր սեպեց արձանագրել, որ ազգայնական խնդրի լուծման կէտում Խորհրդաժողովին մասնակցող բոլոր կուսակցութիւնները համաձայնւում են, ընդունելով ամենքն էլ՝ որ ամէն մի ազգ ունի ինքնորոշման (իր ճակատագիրը տնօրինելու) իրաւունք, ունի նաև իրաւունք վայելելու ազգայնական զարգացման ազատութիւն՝ երաշխաւորուած օրէնքներով։

Ժողովը միաձայն ընդունեց, որ ներկայ ռէժիմը հանդիսանում է ոչ թէ իբրև կազմակերպութիւն զանազան ազգութիւնների խաղաղ, միատեղ քաղաքակրթական աշխատանքի, այլ իբրև կազմակերպութիւն բռնութեան, որ հաւասարապէս ծանրացած է բոլոր ազգութիւնների վրայ։ Կռիւը ռուսացման ձգտումների դէմ, որոնք ազաւաղում են Ծայրերի հասարակական կեանքի հիմունքներն իսկ, կռիւը ազգայնական թշնամութեան արհեստական գրգռման դէմ պէտք է միանայ այն կռուին, որ պիտի մղէ արտաքին յարձակողական քաղաքականութեան դէմ, որովհետև՝ թէ՛ ռուսացման ձգտումները և թէ արտաքին քաղաքականութիւնը նպատակ ունեն հեռացնել հասարակական կարծիքի ուշադրութիւնը ներքին քաղաքականութեան խնդիրներից՝ ձգձգելու համար ներկայ ռէժիմի գոյութիւնը։

Գործունէութեան եղանակների խնդրի վերաբերմամբ՝ իհարկէ, ամենից առաջ հաստատւեց նրանց այլազանութիւնը, որ բղխում է այլևայլ կուսակցութիւնների տարբեր բնաւորութիւնից, կազմից, նպատակներից և գործունէութեան պարագաներից. բայց միևնոյն ժամանակ հաստատւեց և այն՝ որ հէնց այդ այլազանութիւնը որոշ չափով կարող է հանդիսանալ իբր պայման ընդհանուր աջողութեան և որ, ուրեմն, ներկայ դէպքում բոլոր կուսակցութիւնների գործունէութեան լիակատար ազատութիւնը ոչ միայն չէ հակասում, այլ, ընդհակառակը, գտնւում է կատարեալ ներդաշնակութեան մէջ՝ համերաշխ գործակցութեան նրանց դիտաւորութիւնների հետ։ Իբրև առաջին և շատ կարևոր քայլ այդ համերաշխ գործողութիւնների ճանապարհի վրայ՝ Խորհրդաժողովը համարում է հէնց նրան մասնակցող կուսակցութիւնների խորհրդակցութեանց ներկայ արձանագրութեան հրատարակումը։ Ժողովը՝ իր վճիռներին աւելի լայն հրատարակութիւն տալու համար՝ մշակեց նոյնպէս մի կարճ յայտարարութիւն այն սկզբունքների, որոնք ընդհանուր են խորհրդակցող կուսակցութիւնների համար. այդ յայտարարութիւնը կցւում է ներկայ արձանագրութեանը.

Նկատելով՝

1) Որ միապետական (ինքնակալ) ռէժիմը ճակատագրական խոչընդոտ է հանդիսանում առաջադիմութեան ու բարեկեցութեան համար՝ թէ ռուս ժողովրդի և թէ ռուս կառավարութիւնից ճնշուած բոլոր ազգութիւնների՝ և որ այդ ռէժիմը քաղաքակրթութեան ժամանակակից դրութեան մէջ ներկայացնում է մի անիմաստ ու վնասակար տարաժամութիւն (անախրոնիզմ).

2) Որ կռիւը այդ ռէժիմի դէմ կարող է մղուել շատ աւելի մեծ ուժով ու աջողութեամբ, եթէ զանազան՝ թէ ռուս և թէ ոչ-ռուս՝ դիմադրական ու յեղափոխական կուսակցութիւնների գործողութիւնները համաձայնուած լինէին:

3) Որ ներկայ վայրկեանը առանձնապէս բարեյաջող է յայտնւում այդ բոլոր կուսակցութիւնների համերաշխ գործունէութեան համար ընդդէմ ինքնակալ կառավարութեան, որը վարկաբեկ և ուժասպառ է դարձել իր արկածասէր քաղաքականութեամբ յարուցած պատերազմի սոսկալի հետևանքներով, — ներկայացուցիչները ռուս Սահմանադրականների, Լեհական Ազգային Լիգայի, Լեհական Սոցիալիստական Կուսակցութեան, Սոցիալիստ-Յեղափոխականների Կուսակցութեան, Վրացական Սոցիալիստ-Ֆեդէրալիստների Կուսակցութեան, Ֆինլանդական Կուսակցութեան գործօն դիմադրութեան և Հայ Յեղափոխական Դաշնակցութեան — հաւաքելով դիմադրական ու յեղափոխական կազմակերպութիւնների խորհրդաժողովի՝ միաձայն որոշեցին անել այդ բոլոր կազմակերպութիւնների անունից հետևեալ յայտարարութիւնը.

Ոչ մէկը ծողովին ներկայացող կուսակցութիւններից, միանալով համերաշխ գործողութիւնների համար, մի վայրկեան անգամ դրանով չէ մտածում հրաժարուել իր ծրագրի ոևէ կէտից, իր տաքտիկի ոևէ ձևերից, որոնք համապատասխանում են պահանջներին, ուժերին և դրութեան այն հասարակական տարրերի, դասակարգերի կամ ազգութիւնների, որոնց շահերը նա ներկայացնում է:

Բայց միևնոյն ժամանակ, այդ բոլոր կուսակցութիւնները հաւաստում են, որ հետևեալ հիմնական սկզբունքներն ու պահանջները հաւասարապէս ընդունւում են բոլորի կողմից.

1) Բռնապետութեան ոչնչացումն. վերացումն այն բոլոր բռնի միջոցների, որոնք խախտեցին Ֆինլանդիայի սահմանադրական իրաւունքները:

2) Միապետական (ինքնակալ) կարգի փոխարինումն ազատ ռամկավարական ռէժիմով, հիմնուած ընդհանուր ձայնատուութեան վրայ:

3) Ազգայնական ինքնաորոշման իրաւունք. օրէնքներով երաշխաւորուած ազգայնական զարգացման ազատութիւն՝ բոլոր ժողովուրդների համար: Վերացումն ամէն տեսակ բռնութեան՝ ռուս կառավարութեան կողմից՝ առանձին ազգութիւնների վերաբերմամբ:

Յանուն այդ հիմնական սկզբունքների ու պահանջների՝ Խորհրդաժողովին ներկայացող կուսակցութիւնները կը միացնեն իրենց ջանքերը՝ փութացնելու համար անխուսափելի անկումը այն բռնապետութեան, որը հաւասարապէս անհաշտելի է իւրաքանչիւր կուսակցութեան առաջադրած հեռաւոր ու բաղմազան նպատակների իրագործման հետ:

ՌՈՒԶԻՆ ՔԱՅԼ

«Եւ այժմ անձկալի ու յուսախառն անհամբերութեամբ սպասում ենք այն հետևանքներին, որ պիտի տայ Ռուսաստանում կենդանի ազատարար գործողութիւնը, պատրաստուած ընդդիմադիր կուսակցութիւնների համաձայնութեամբ:

«Երբ մտածում էք, թէ որպիսի սքանչելի արդիւնքներ կունենայ Եւրոպայի և աշխարհի համար ռամկավարական ազատ ռէժիմի հաստատումը Ռուսաստանի մէջ, երբ մտածում էք, որ ցարիստական բռնապետութեան անկումով բոլոր կատարեալ ու կէս-բռնապետութիւնները պիտի կորցնեն իրենց յենակէտը, — իրաւունք ունէք ասելու, որ դա կը լինի մարդկային պատմութեան մեծագոյն անցքը, Ֆրանսիական Յեղափոխութիւնից իվեր»:

ԺԱՆ ԺՕՌԷՍ

Աղջունենք ազգերի և կուսակցութիւնների այդ անգրանիկ Խորհրդաժողովը, որ գալիս է մի նոր, բեղմնաւոր շրջան բանալու Ռուսաստանի յեղափոխական շարժման պատմութեան մէջ:

Ազգային ու կուսակցական սուր կռիւների այս ժամանակում՝ դա մի բախտաւոր երևոյթ է, անշուշտ, որ արժանի է արձանագրուելու ամենախորին գոհունակութեամբ:

Հրահանգիչ էր տեսարանը, երբ 20-ի չափ պատգամաւորներ, առնուազը վեց ցեղի պատկանող, շատերը եկած բուն Ռուսաստանից - զէմստվոների կարևոր անդամներ, գիտնականներ ու հրապարակախօսներ — համերաշխութեամբ որոնում էին իրական միջոցներ՝ համադրելու այլևայլ ուժերը, կազմակերպելու մի հզօր, ազգու դիմադրութիւն՝ բոլորին ատելի ռէժիմի դէմ:

Ռուս ապատամիտները ցոյց տուին շնորհակ ըմբռնումն այնպիսի կնճռոտ խնդիրների, ինչպէս՝ ազգերի յարաբերութիւնները, պետական-քաղաքական վերակազմութիւն, ընդհանուր ընտրողական իրաւունք և այլն: Միւս կողմից յեղափոխական ու սոցիալիստական կուսակցութիւնները — մանաւանդ լեհերը — հրապարակ չհանեցին այնպիսի մանաւոր, ծրագրական պահանջներ, — Լեհաստանի անկախութիւն և այլն — որոնք հանդիպէին բացարձակ մերժման և վիժեցնէին ըմբոստ ուժերի այդ առաջին համագումարը:

Ասել չէ, իհարկէ, թէ յեղափոխականները կամ սոցիալիստները ոևէ բան զոհեցին իրենց ծրագրից, ոևէ զիջում կոմպրոմիս արին չափաւոր տարրերին.

Ամենևին։ Համաձայնութեան յանգելու համար՝ նրանք առաջադրեցին իրենց պահանջների նուազագոյն չափը, բայց միաժամանակ և որոշեցին, որ ամէն մի կուսակցութիւն ազատ է մնում իր գործողութիւնների մէջ։ անխախտ է պահում՝ թէ իր ծրագրի բոլոր կէտերը, թէ իր տաքտիկի բոլոր ձևերը։

Եւ ամէն բան ընթացաւ խաղաղութեամբ, բոլոր վճիռները տրուեցին միաձայն, ամբողջ շաբաթուայ երկար ու հիմնական վիճաբանութիւնից յետոյ։ (Գործունէութեան միջոցների վերաբերեալ որոշումները, բնականաբար, չեն հրատարակւում)։

Եւ այժմ մնում է ի կատար ածել կարևորագոյնը — Խորհրդաժողովի հրահանգները։ Պատգամաւորները իրարու խօսք տուին և անջատուեցին. — կուսակցութիւնների ամբողջութեանն է մնում ձեռք առնել միջոցներ՝ խօսքը կենդանի գործի վերածելու։

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, գիտակ իր դերին, վստահ իր ուժերի վրայ, չպիտի թերանայ իր պարտականութիւնների մէջ, որ նա ստանձնել է հայ ժողովրդի առաջ։ Պատրաստ թև տալու ամէն մի գործօն ու շիտակ կուսակցութեան, յանուն ընդհանուր ազատարար կռուի՝ նա միաժամանակ ականջ կը դնէ հասարակական էւոլիւցիայի ձայնին և կը յարմարեցնէ իր տաքտիկը այդ էւոլիւցիայի պահանջներին։

Պարիզի ժողովը ուժգին զարկ կը տայ յեղափոխական շարժման ամբողջ Ռուսաստանում, կը նպաստէ ժողեցնել իրար՝ բաժան, հակամարտ ազգութիւնները, հաւատ ու կորով կը ներշնչէ նրանց։ Վստահ ենք նաև, որ խորհրդաժողովին այս կամ այն պատճառով մասնակից չ'եղող կուսակցութիւնները՝ Ազատութեան շահը ամէն նկատումից բարձր դասելով՝ պիտի գան յարեն նորակազմ դաշնակցութեան և պիտի փութացնեն բռնակալութեան խորտակման ժամը։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒԻՒ

Այս երկու կռիւների նկարագրութիւնը քաղում ենք „Արեան Գուսան“ անունով ութերորդ թողուցիկից, որ Դաշնակցական ընկերները պարբերաբար հրատարակում են նոյնիսկ ա ր ե ա ն Երկրի մէջ։

I

ՄՇՈՅ ԴԱՇՏԻ ԿՈՒՐԱՎՈՒ ԳԻՒՂԻ ԿՌԻՒԸ

Լեռնէն իջնելէն քանի մ'օր առաջ, մեր ընկեր Քէռին իր ընկերներով դաւադրութեամբ մը սպանուած էր Կուրավու գիւղին մօտ։ Անդրանիկը լսելով այդ, իսկոյն խումբը կազմ ու պատրաստ վիճակի մէջ դրաւ և յուլիս 16-ին, 35 ընկերներով, իջանք Կուրավու գիւղ՝ գտնելու այդ ստոր դաւադրութեան հեղինակներն և զանոնք պատժելու։ Գիւղին մէջ խումբը բաժանուած չորս դիրքերու վրայ՝ կըսպասէինք իրիկուան։ Ամբողջ գիշեր ճամբայ էինք քալել և քնատ էինք։ Յորեկ ժամը 5½-ին լուր եկաւ, որ 80 հետևակ զօրքեր գիւղ մտան։ Գիւղի ռէս ատոնց համար պատրաստել կուտայ եկեղեցւոյ քովի տեղեր և հացու մածուն ղրկելով կըշտապէ հեռացնել զանոնք, որպէս զի տղայք չվատնուին։

Բայց տաճիկ զինուորները կշտանալէ վերջ, ըստ իրենց մշտական սովորութեան, կըսկսին ներս խուժել գիւղացոց տները։ Տուն մը կը մտնեն, ուր կին մը միայն կը գտնուէր և պարագայէն օգտուելով բռնաբարութեան փորձեր կ'ընեն։ Կնոջ ձայնը կը հասնի մեր ընկերներու ականջը, որոնք կը փորձեն դուրս խուժել և ջարդել այդ լիրբ զօրքերը, սակայն հէնց նոյն վայրկեանին 8-10 հոգի ներս կը մտնեն իրենց դռնէն և մերոնց տեսնելով՝ ահաբեկած կը փախչին և լուր կուտան հարիւրապետին, որ կը հրամայէ իսկոյն պաշարել զանոնք։ Հրամանը կը կատարուի։ Տղայք բոպէապէս կը պաշարուին տանիքէն և դիմացի տներէն։ Մերոնք բոլորովին կազմ ու պատրաստ, ներսէն յանկարծ միահամուռ կը պարպեն հրացանները դէպի տանիքը, անգամ մըն ալ բացուած դռնէն դէպի դուրս և կը յարձակուին պաշարողներու վրայ։ Մենք հրացանի ձայներ լսելուն պէս՝ դրսէն օգնութեան եկանք։ Գիրկընդխառն կը կուէինք դաշոյներով ու ատրճանակներով... Եւ վերջապէս թշնամին ստիպուեցաւ փախուստ տալ՝ թողնելով 15 զինուորի և քիւրդի դիակներ։ Մեր ընկեր Մուրադը՝ կանգնած տանիքը կը գոչէր. „Տղայք այս ալ Քեռի վրէժն է, զարկէ՛ք այս յիմար զօրքերուն, և տեղերէդ մի շարժուիք, որ թապուրներ գան և անոնց հետ ալ չափուինք“։ Անկասկած Սուլուխի և Հավրանի զօրքեր, քիւրդեր ու չէրքէզներ շուտով պիտի հասնէին։ Անդրանիկը բաժանեց մեզ դիրքերու վրայ. եկեղեցու տանիքին վրայ ալ դիրքեր պատրաստելով դրօշակը կանգնեցուցինք, թէյ պատրաստել տուինք և երգեր երգելով՝ կըսպասէինք զօրքի գալուն...

Ժամը 7½-ին սկսեցին թափուել զօրքն ու քիւրդը և պաշարել մեզ։ Անդրանիկի, Գէորգի, Մուրադի քով նստած էինք. երբ մեր միւս դիրքերէն պատգամաւոր ղրկած էին Անդրանիկին, ըսելով որ „մենք չենք ընդուներ, որ դուք կուէք, քանի որ 15 Ֆէդայի 2,000 թշնամու դէմ բաւական է, մինչդեռ մենք 30-էն աւելի ենք“։

Թշնամու այդ ահագին բազմութիւնը ներս խուժեց. մենք մեր դիրքերու մէջ անխախտ՝ պաղարիւնութեամբ շուռեցանք մինչև իրիկուն և մութ կոխելուն պէս՝ պակարման շղթան յանկարծ ճղեցինք ու անցանք ցրուելով թշնամին։

Գիրկընդխառն կուելու միջոցին՝ մեր ընկերներու սխալմամբ արձակած գնդակէն սպանուեցաւ Ցրօնքցի Խուշիկ և վիրաւորուեցաւ մէկը։

Եւ դեռ ցարդ ալ տաճիկ զօրքը չէ մոռացեր մեզ ու կը պատմէ բոլորին Ֆէդայիներու կռուի մասին։

Մեր հեռանալէն վերջ լսեցինք, որ զօրքեր, ըստ իրենց վայրագ սովորութեան, այրեր են գիւղը և թալաններ։

II

ԱԽԼԱԹԻ ՇԱՄԻՐԱՄ ԳԻՒՂԻ ԿՌԻՒԸ

Լրտեսներու և դաւաճաններու շնորհիւ (որոնցմով լի է և Վանը) կառավարութիւնը տեղեկացաւ, որ մենք Շամիրամ գիւղն էինք։ Կուրավուի կռուէն և ճանապարհի յոգնութիւնէն դեռ նոր հանգստացած՝ պաշարուեցանք։

Մեզ համար խաղալիք էր դարձեր արդէն մեր ցած ու անամօթ թշնամու հետ կուելը և մենք ծարաւ էինք անոր արեան։ Անդրանիկն և Մուրադը քիչ մը տկար էին։ Մենք չկամենալով յոգնեցնել զանոնք՝ Գէորգ Չավուշի և միւսներու առաջնորդութեամբ խոյացանք պաշարող շղթայի վրայ։ Սակայն Անդրանիկը դուրս թռաւ և մեզ ետ կանչելով դիրքերի վրայ բաժանեց։ Դրաւեցինք գիւղի երեք բլուրներ, իսկ գիւղի մուտքի բերանը նախօրօք վաղած ու գրաւած էր մեր սիրելի տասնապետ Սմբատը երկու ընկերով։ Դիրք չգտնուելու պատճառաւ, նա խոտի խուրձեր շարած էր առջև, գոռգոռալով, երգելով ու զայրացնելով թշնամուն՝ կարկուտի նման կը սփռէր շիկացած գնդակները, թոյլ չտալով ահագին զօրքին մօտենալ գիւղի մուտքին։ Մենք շուտով օգնականներ ղրկեցինք Սմբատին, որովհետև գիւղը մեզ կարևոր էր և ձեռքէ պէտք չէր թողնել...

Անդրանիկը օգտուեց կրկին եկեղեցու տանիքէն. քարերով դիրքեր շինեց և բիւր գնդակներու տարափին տակ կարմիր դրօշակը կանգնեցնելով՝ հրամաններ կուտար։ Հիացմունքի արժանի էր Շամիրամցի մի մանկահասակ հարսի վերաբերմունքը։

Նա գնդակների տարափը արհամարելով՝ գիւղէն շալակած հաց, մածուն և ջուր բերեց մեզ վերևի դիրքեր և հակառակ մեր թախանձանքին՝ չուզեց երբէք խնայել իրեն կամ հեռանալ մեզնէ. և մինչև վերջն ալ անդադար կը թռչէր դիրքէ դիրք քաջալերելով ու երգելով...

Թշնամին առաւօտեան ժամը 10-էն մինչևիրիկուն մեծ ճիգ թափեց գիւղ մտնելու, բայց ոչ մի քայլ չկրցաւ առնել։

Եւ երբ իրիկուն եղաւ, մեր երեք վիրաւորները հեծցընելով մեր և թշնամիէն խլած ձիերու վրայ ու հրաժեշտ տալով նահատակուած մեր սիրելի 18 տարեկան փոքրիկ Պետրոսի անշունչ մարմնին՝ հեռացանք տխուր։

Եւ կրկին անպաշտպան գիւղի վրայ թափեց թշնամին իր անարգ կատաղութիւնը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՆՈՐ ԲՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մուշ, 19 Հոկտեմբեր

Մեր աղետալի կացութիւնը փոփոխութիւն մը չէ կրած, այլ աւելի կը սեղմի ու կը դառնանայ։ Կառավարութիւնը նորանոր խստութիւններ ձեռք առած է, որպէս զի բնաւ շունչ առնել չտայ ժողովրդին։ Ահա իր շահատակութիւնները.

1) Սոսկալի հարկաւաքութեան սկսած է, հարկահաւաքութիւն մը, որու աննկարագրելի զեղծումներու, զըրկանքներու և չարիքներու մասին այնքան գրուած է։ Ժողովրդէն անդադար դրամ կը պահանջեն։ Բան չունիս տուր, կրկին տուր, բայց նորէն կ'ուզեն, կը չարչարեն։ Գիւղերու մէջ կատարուող այս ծանր զեղծումները քաղաքն ալ փոխադրեցին. քսան տարիներու մնացորդ ահագին քանակութեամբ տուրքերը հաւաքել սկսած են. ամէն ինչ, օրապահիկն ալ ծախել կուտան։ Անօթի, զրկուած, կոտորուած ժողովուրդը շարեր է։

2) Այս բաւական չէ. այն բոլոր հայերը, որոնց գէնքերը բռնի առնուեցան կառավարութենէն՝ դատի ենթարկուած են։ 1500-էն աւելի մարդիկ, այսինքն խեղճ հայ գիւղացիներ, կը հաւաքեն և կը չարչարեն, առանց խնայելու ոչ ոքի, նոյնիսկ այդ պատճառով կիներն ալ դատի ենթարկուած են. վերջին 4-5 օրերու մէջ հարիւրաւորներ ժողված են և կը ժողվեն. հետևանքը դեռ յայտնի չէ։ Ոմանք կը պնդեն որ աքսոր կամ բանտ կայ։ Իսկ բանտերը մի՛ ըսէք, դիւական գերեզման, ուր մըտնողին դիակը միայն կ'ելնէ. ժողովուրդը մեծ իրարանցումի մէջ է։ Երեք բանտի մէջ սոսկալի հիւանդութիւն կը շարունակէ. մի կողմէն օրը մէկ երկու դիակ կ'ելնէ, միւս կողմէն քանի մը նոր հայեր հոն կը տարուին ի տեղի անկելոցն...

3) Կարգ մը վտարանդի ու փախստական եղող հայերէն ոմանց կիներ և ոմանց մայրը ձերբակալելով դատաստանի ենթարկած են՝ պահանջելով որ կամ իրենց մարդիկը ցոյց տան կամ անոնց պատիժը պիտի կրեն։ Այսպէս բանտարկեցին փախստական Կոտոյեան Յակոբի կին Իւղաբերը, Նազարին մայր Սալամը ևն։ Նոյնպէս բանտարկուած են ուրիշ հայեր ալ, պատճառաբանելով թէ իրենք ժամանակին երաշխաւոր եղած են փախստական հայերու։ Պիթլիզի վալին գաղտնի ամբաստանուածներու ցանկ մը պատրաստել տուած է, պատեհ առթիւ զանոնք պատժելու սպառնալիքով. մեկնելու պահուն հետևեալ չարագուշակ խօսքերը արտասաներ է. „Թո՛ղ տեսնեն թէ ինչեր պիտի ընեմ անոնց, ինչե՛ր...

Դժբախտ սասունցին կը մնայ ու կը վառի իր ամենածանր, անտանելի տառապանքներու մէջ։ Նա զուրկ է կենսական ամէն պէտքերէ. կուտակուած ու պաշարուած է իր նեիրական, մինչև այժմ մահաբեր սարերու գագաթները։ Մինչև իսկ թոյլ չեն տար մուրալու։ Կառավարութիւնը կապեր կաշկանդեր է։ Զեն ձգեր օրապահիկ ճարելու, կ'աղաղակեն ամէն կողմ, լսող չի կայ։

—

Մուշ-Սասուն, 16 Նոյեմբերի

Այս շաբթուս տեղս եկաւ Վանի անգլիական հիւպատոսը, որ երկու ամիս առաջ մեր կողմերն էր և անմիջապէս բարձրացաւ Սասուն։ Նա կ'ուզէր անձամբ տեսնել սասունցի կարօտեալները և իրազեկ լինել անոնց բուն կացութեան։ Հիւպատոսը արագ շրջեր է բոլոր վնասուած գիւղերը. մտադիր է, ինչպէս ասեր է, նպաստներ բաշխել։ Սասունէն եկողներ կ'ըսեն, որ նա գտեր է ժողովուրդը սաստիկ թշուառութեան մէջ և խիստ զայրացեր է կառավարութեան դէմ, որը անոր հանգստացուցեր էր նախօրօք, յայտնելով, որ սասունցիներու ամէն պէտքերը հոգացուած են...

Ինչպէս կը հաւաստեն, հիւպատոսը կազմելու է մի տեղեկագիր՝ Սասունի արդի կացութեան մասին։

Ճնշումները կը շարունակուին նախկին եղանակով. հարկահաւաքութեան, զօրքերի պատսպարումի և ուրիշ նման պատրուակներով կը խեղդեն հայ տարրը։ Լուր կայ, որ հինգ զօրանոցներէ զատ, որոնց մէջ կայ մէկ-մէկ վաշտ զօրք, պիտի կառուցուին ուրիշ պահականոցներ ևս։ Կարծես ամբողջ Սասունը զօրանոցի պիտի վերածեն։

—

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ, 10 Հոկտեմբերի

Ասօրական Տօնի գիւղում տաճկէկ չավուշը հաւանում է գիւղի Կաջայի (քահանայ) աղջկան, որին, մենակ եղած միջոցին, ուզում է բռնաբարել։ Աղջիկը դուրս է պրծնում չավուշի ձեռքից և ապաւինում հօրը։ Բայց

գաղանացած ջավուշը յարձակւում է հօր վրայ, վիրաւորում թևից և աղջկանը փախչնում։ Կալան հիմա բերուած է Վան, միսիոնարների հիւանդանոցը, իսկ աղջկայ մասին լուր չկայ։ Անգլիական հիւպատոսի միջամտութիւնը դեռ ոչ մի հետևանքի չէ յանգել։

—

ՌՇՏՈՒՆԻՔ, 10 հոկտեմբերի

Ռշտունիքը բաղկացած է 24 մանր և խոշոր գիւղերից, որոնք փռուած են Վանայ ծովի հարաւային ափերին և Կապուտ կողմ լեռնային խորշերում։ Այդ գիւղերի ազգաբնակութիւնը սարսափելի ճնշումներ է կրում կառավարութեան կողմից և ծանրաբեռնուած է հարկերով։ Հարկահաւաքները, լեցուած գիւղերը, ծծում են ժողովրդին։ Բացի դրանից նորերս կազմել է մի աւազակախումբ, կառավարութեան թելադրութեամբ, որը կրելով քաղաք տանող ճանապարհը թալանում ու յաճախ սպանում է անց ու դարձ անողներին։ Խումբը բաղկացած է 12 հոգուց և մնում է Գողաձորիկ անունով ձորի մէջ։ Մի քիչ առաջ նրանք սպանել են Անգղ գիւղացի երկու հայերի, որոնք քաղաքից վերադառնալիս՝ ընկել էին նրանց ձեռքը։ Նոյն խումբը սպանեց Վաբագայ որբանոցի սանիկներից մէկին, որը արձակուրդի օրերը՝ ցանկանում էր իր ծննդավայրը դառնալ։ Երկու շաբաթ առաջ այդ խմբի մի քանի անդամներ Գրզոտաղ գիւղացի մի հայի խոստանում են զէնք ծախել և այդ պատրւակով խեղճ գիւղացուն գիշերը անհետացնում են և մինչև հիմայ էլ յայտնի չէ թէ ինչ եղաւ։

—

ԿԱԲՃԿԱՆ, 25 սեպտեմբերի

Այս գիւղը ենթարկւեց յարձակման։ Գիւղի քրդերը, Մուսա բէկի թելադրութեամբ, գիշերը մտնում են գիւղացոց տները և բռնաբարում երկու կին և երկու աղջիկ։ Անունները դժբախտաբար չկարողացանք իմանալ։ Աղջիկները չեն ուզում քրդերի աղտոտ պահանջներին բաւարարութիւն տալ, և այդ պատճառով անգութները ձեռք են գցում նրանց և խեղդելու չափ քաշքշում։ Երկու օր յետոյ փախցնում են մի այլ հայուհի և բռնի կերպով կրօնափոխ անում։ Տեղական փոխանորդը Սահակ քահանան միջամտում է և այդ պատճառով սարսափելի կերպով ծեծի և անպատուութեան է ենթարկւում։ Կնոջ ամուսինը և բարեկամները կառավարութեան են դիմում, որը „արդարութեան“ հետևելով ծեծում և բանտարկում է նրանց։ Կարճկանի մէջ կոտորածի նշաններ են երևում. քիւրդ ազգաբնակութիւնը մի քանի գիւղերի էլ սպառնալիք է արել։ Ահագին բազմութեամբ ներս են խուժել Վանիք գիւղը, որտեղ նոյն բռնաբարումները կատարելուց յետոյ, հրացանով զարկել են մի հայի։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

(ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Ս. Պետերբուրգ, 25 նոյեմբերի

Երևակայել անգամ անկարող էք, թէ անշարժութեան այս մեծ ովկիանոսի մէջ, ի՜նչ անօրինակ ալէկոծութիւն է սկսուած, որ ամէն օր, ամէն ժամ, ամէն րոպէ, աղմկում է մեր սրտերը, այնքա՜ն կարօտ ոևէ նորութեան։

Խաբրիկները յաջորդում են միմեանց խելակորոյս արագութեամբ, և շշուկներն ու փսփսուկը — ոստիկանութիւնը դեռ չէ մեռած — երբեմն դառնում են այն աստիճան յամառ և ճշմարտանման, որ մենք մեզ կարծում ենք յեղափոխութեան նախատօնակին, ընդունակ հրապարակային ծափ զարկելու նրանց, որոնք նրա փշոտ ճամբան հարթեցին։

Համատարած դիւրահաւատութիւնը երբեմն հասնում է ծայրայեղ միամտութեան։ Երկու շաբաթ առաջ լուր պատեց մայրաքաղաքի մէջ, որ ներքին գործերի մինիստրը, գեներալ Սվեատօպոլկ Միրսկին — որքա՜ն միամիտ յոյսեր կան այդ մահկանացուի վրայ — զէմստվոների ներկայացուցիչներին խորհրդակցութեան է հրաւիրել։ Բերկրութիւնը չափ ու սահման չունէր։ Համառուսական պարլամենտի բացումն էինք երազում։

Բայց որքա՜ն արագ և մեծ եղաւ յուսախաբութիւնը։ Հաւաքւեցին բարեմիտ ներկայացուցիչները, թուով 98, պատրաստւեցին խորհրդակցել։ Սակայն դեռ բերանները չբացած, հրաման ստացան խորհրդակցել լռելեայն, ծածուկ, այնպէս որ ժողովի տեղն անգամ յայտնի չլինի։ Նոյնիսկ լրագրների ամենագէտ բեպօրտեօրները ոչինչ չգիտէին։ Եւ ինչ օգուտ, եթէ գիտենային էլ։ Մամուլը պաւէր էր ստացել՝ ձայն-ծպտուն չհանել։

Թևերը կտրած, յուսախաբ, քաջալերութիւնից զրկուած, ներկայացուցիչները այնուամենայնիւ վճռեցին՝ պինդ կանգնել և սկսել խորհրդակցութիւնը, թէև անպաշտօն կերպով, և հետևանքը յայտնել մինիստրին։ Այդպէս էլ եղաւ։ Ու մի օր, երկու պատգամաւորներ, իբրև 98 ներկայացուցիչների բանբեր, տեսակցութիւն խնդրեցին, ներկայացան մինիստր Միրսկուն, ու նրան հաղորդեցին ժողովի եզրակացութիւնը, — ժողովրդական ներկայացուցչութիւն, ընդհանուր ձայնատուութեան իրաւունք, ազատութիւն խօսքի, ժողովի և կրօնի, հաւասարութիւն բոլոր ազգերի, — քաղաքական տարրական արտօնութիւններ, որոնցից զուրկ է նշանաւոր Ռուսաստանը, բայց որը վաղուց վայելում են այնպիսի աննշան երկիրներ — հեռու չգնանք — ինչպէս մի Սերբիա, մի Բուլգարիա, մի Ռումանիա...

Մինիստր Միրսկին աչքերը չուեց։ „Ուրեմն դուք սահմանադրութիւն էք պահանջում“ — մրմնջաց նա, բոլորովին շւարած։ „Դա մեր խորհրդակցութիւնների եզրակացութիւնն է, վրայ բերեցին պատգամաւորները, և մենք՝ յանուն ժողովի խոնարհաբար խնդրում ենք ձեզ՝ այդ որոշումը ներկայացնել նորին մեծութեան“։

Ասացին, գլուխ տին և դուրս եկան։ Իսկ նորին մեծութիւնը, հաստատապէս յայտնի է այդ, լսել անգամ չի ուզում ոևէ սահմանադրութեան մասին։ Այդ բառը ներվային ցնցումն է պատճառում գահակալին։ Թուլամիտ և շողոքորթուած, Նիկոլայ II այն համոզումն է դաւանում, որ ինքը՝ նախախնամութեան տեղապահն է աշխարհի երեսին, և այն օրը, երբ ոևէ կերպով, սահմանադրութեամբ թէ մի այլ եղանակով չափ դրուի իր քմահաճոյքներին, — դա կը լինի ջրհեղեղի սկիզբը և ամբողջ Ռուսաստանը մի օրում կը խաւարի ու կուլ կերթայ տարտարոսին։ Բռնապետութեան դաստիարակը՝ Պոբեդոնոսցեվ՝ այդ է ներշնչել։ Այդ էր երգում նրա ականջին ամենակարող Պլեվէ ամբողջ երեք տարի։ Այդ են կրկնում նրան այժմ Ալէքսէեվ և Ընկ., որոնք կայսեր „աստուածութեան“ վրայ, ինչպէս հսկայական պատուան-

գանի վրայ, իրենց սեփական ցօրութիւնն են ուզում հաստատել...

Ահա թէ ինչու, այժմ արդէն ազատամտութեան զեփիւռներով — դժուար է հ ո ղ մ բառը գործածել — տարւած Սվեատոպոլկ Միրսկին յարուցելէ իր դէմ ահագին դժգոհութիւններ պալատական սակաւապետութեան շրջաններում, որոնք մարսել չեն կարող նոյնիսկ այն, որ ինչ որ զեմստվօների խորհրդակցութեան լուրեր կան, որ լրագրների մէջ „գարնան" աւետիսներն են տալիս և ի լրումն այդ բոլորի՝ աքսորավայրերից վերադառնում են մարդիկ, որոնք նոյնպէս երբեմն „գարնան" մասին էին խօսում, թէև ծածուկ, գաղտնօրէն...

Եւ չզարմանաք, եթէ մի օր հեռագիրը լուր բերի ձեզ, որ Միրսկին հրաժարական տուեց և նրա տեղ նշանակուեց Ալէքսէեվ կամ լաւագոյն դէպքում Վիտտէ, այդ „փորձուած քաղաքագէտը", որ չափում է, բայց երբէք չի կտրում: Եթէ այդ շուտով չի պատահի, դա ոչ թէ այն պատճառով, որ „գարնան հովերը" դուր են գալիս բռնութեան պաշտպաններին, այլ գլխաւորապէս այն պատճառով, որ Պորտ-Արտուրի դիմաց և Մուկդենի շրջակայքում կատարուող ողբերգութիւնները այնքան հուժկու և առասպելական են, որ անհրաժեշտ է, զգուշութեան տեսակէտից, դեռ էլի մի առ ժամանակ խ ա բ ե լ հասարակաց մ ի ա մ ի տ կարծիքը, օրօրել նրան երազներով, թոյլ տալ՝ որ նա շշուկներով մխիթարուի, մինչև որ կը հասնի հատուցման ժամը...

Բայց մի՞թէ մինչև այդ դժբախտ ժամը՝ չպիտի հնչէ յեղափոխական շեփորը և մարտական ուժերը անկարող պիտի լինեն ձեռք ձեռքի տուած՝ մի նոր և վճռական հարուած տալու բռնապետութեան գլխին, այնքա՜ն շշմած ներկայ օրերին...

29 Նոյեմբերի

Կովկասն էլ ազատ չմնաց ընդհանուր յափշտակութիւնից: Այնտեղ էլ, ինչպէս երևում է ստացուած լուրերից, սկսել են երազներ տեսնել և նոյնիսկ շատ սքանչելի երազներ: Դրանից մէկը՝ եկեղեցական կալուածների խնդիրը: Առիթ կայ կարծելու, որ այդ լուրը ծագել է Պետերբուրգի հայերի շրջանից: Մի օր Եւրոպայի մի թղթակցի հետ խօսելիս, նոր մինիստրը՝ պատասխանելով հայերի մասին արած նրա հարցին, ասաց. „Հայերն էլ, ինչպէս միւս ազգերը գոհ կը մնան ինձանից, հարկաւոր է միայն, որ մի փոքր համբերութիւն ունենան": Այդ խօսքերը անմիջապէս տարածուեցին քաղաքում: Հայոց գաղութի մի քանի անդամները, որոնց փ ե շ ա կ ն է լուրեր հաղորդել Կովկաս, անմիջապէս տեղեկագրեցին, որ „կալուածները յետ պիտի տրուին", որովհետև „հայերին գոհացնելու խօսք է տուել" մինիստրը: Լուրերի սիրահարները գոհ մնացին: „Ենթադրութիւնը" տարածուեց՝ լայնացաւ, դարձաւ հաստատուն տեղեկութիւն և մի օր, երբ այդ տեսակ լուրերից մէկը սպրդեց Վիէննայի մի լրագրի մէջ,—դիւրահաւատութիւնը հասաւ իր գագաթնակէտին, և միամիտ հայերը սկսեցին հաւատացնել միմեանց՝ որ „աւետեաց երկիրը" մօտ է:

Հազար ափսոս, որ այդ ուրախ տրամադրութիւնը վաւերացնելու ոչ մի փաստ չունինք և ոչ էլ առիթ: Պետերբուրգ այդ մասին խօսք չէ եղել. և ընդհակառակը, նոյնիսկ „ազատամիտ" շրջաններում այն տարօրինակ կարծիքն է տիրապետում, որ եթէ ներքին նահանգների վերաբերմամբ զիջումն էլ լինի, Կովկասը պէտք է մնայ զուրկ այդ բոլորից և ենթակայ ամենախիստ հսկողութեան, իբրև յեղափոխական ու անջատական շարժումների բոյն: Իսկ „անջատական" Կովկասի մէջ, ա մ ե ն ա ն ջ ա տ ա կ ա ն ը, հայ տարրն է, ըստ Գօլիցինի, որը դեռ մնում է պաշտօնի մէջ...

Տարածուած լուրը անհաւանական է և այն պատճառով, որ իշխան Գօլիցին, հակառակ զանազան ասեկօսէներին, շարունակում է մնալ կառավարչապետ: Նրա հեռանալու մասին շատ տեսակ լուրեր պտտեցին, բայց մեծ մասամբ անհիմն: Մի բան միայն ճիշդ է այդ բազմաթիւ „ասում են"ներից, այն, որ իշխանուհի Գօլիցին, հոկտեմբեր 14-ի փորձի սարսափահար վկան, ամէն կերպ աշխատում է հեռացնել իր ամուսնուն կովկասեան սահմաններից, երկիւղ կրելով մի նոր, գուցէ աւելի մեծ աղետից: Սակայն ինքնապաստան ս ա մ օ դ ու ր գեներալը, հաւատացած՝ որ ինքը կոչուած է պետական մեծ „րեֆորմներ" անելու հայաբնակ Կովկասում, այլև ոգևորուած հայերից վրէժ առնելու կրքով, շարունակում է հաճոյքով կրել կառավարչապետի տիտղոսը:

Ճիշդ է, իշխան Միրսկին շատ կը ցանկանար ազատել ազգաբնակութիւնը գրգռող Սատրապից, որը այնքա՜ն վարկաբեկ է անում նոյնիսկ միապետութիւնը, բայց տարաբախտաբար նա անզօր է:—Գօլիցին Նիկօլայ կայսրի անձնական հովանաւորեալն է, բարեկամ պալատական ամենազօր խմբի, Պօբեդօնոսցեվի սիրելին և Ալէքսէեվի ու Ընկերութեան դաշնակիցը: Հետևաբար շատ էլ հեշտ չէ նրան տեղից շարժել:

Սիրտ առած այս „կարևոր" բարեկամների հովանուց, կառավարչապետը ոչ միայն տրամադրութիւն չէ ցոյց տալիս Միրսկու „նոր խօսքերին" հետևել, այլ իր նոր քայլերով կարծէք ուզում է աւելի շեշտել 93-ի քաղաքականութիւնը:

Ահա մի անուղղակի ապացոյց:

Գեներալ Ֆրէզէի Կովկասից հեռանալը մասամբ Գօլիցինեան յաղթանակի նշանն է: Եւ ահա թէ ինչու: Իբրև ժանդարմների շէֆ, իբրև Երևանի նահանգապետ, Ֆրէզէ ցոյց տուեց հակակրելի յատկութիւնների մի ամբողջ շարք: Նոյնը և կառավարչապետի օգնական եղած միջոցին: Սակայն այն օրից, երբ Գօլիցին, խենթացած, չափը կորցրած ու այլևս ոչ մի սահման չէր ճանաչում, Ֆրէզէ՝ նրա նախկին դաշնակիցը, կանգ առաւ, և սկսեց փսփսալ սատրապի ականջին, „որ այդքան հեռու գնալ չի կարելի", և նոյնիսկ թեթև դիմադրութեան փորձ արեց: Փոքրիկ-միապետը այդ չմոռացաւ և Պետերբուրգ գնալով ամէն կերպ աշխատեց մէջտեղից վերցնել տալ Ֆրէզէին իբր „ոչ-բոլորովին անձնուէր օգնական": Այդպէս էլ եղաւ և ի լրումն խայտառակութեան, հէնց նոյն ժամանակ, երբ մինիստրի պաշտօնը Պլէվէ-դիակից անցել էր նրա անյաջորդական յաջորդին:

Սակայն այդ բոլորը չէ:

Ֆրէզէի տեղ կառավարչապետի օգնական նշանակելով գեներալ Մալամային, Դոնի շրջանի կօզակների ատամանին, կարծէք ուզեցին ասել Գօլիցինին, որ նա ազատութիւն ունի անել, ինչ ուզում է: Եւ յիրաւի: Ատաման Մալամա պետական մարդ չէ, և ոչ էլ վարչական ուժ. ծանօթ չէ Կովկասին, և իբրև քաղաքացիական մասի կառավարչի օգնական՝ նա միայն և միայն պէտք է ստորագրի այն թղթերը, որ գօլիցինեան արբանեակները նրան կը ներկայացնեն: Մալամա կարող է իբրև

մարդ, լինել նոյնիսկ բարի, քաղաքական ասկածներից խուսափող, սակայն այդ նրան չի փրկի „գործիք լինելու" չարաքախտ անհրաժեշտութիւնից և երևի այդ յոյսով էլ նրա նշանակման համաձայնութիւն տուեց աւելի ուժեղների կողմից...

Երանի թէ այս բոլոր հաւանական ենթադրութիւնները սխալ դուրս գային, որովհետև Գօլիցին՝ առանց մի փոքրիկ դիմադրողի, առանց ոևէ փ ա կ ա ն ք ի յանձին իր օգնականի, կը դառնայ այնքա՛ն ամբարտաւան, որ ա ր ի ւ ն ո տ պատահարները կը նկատէն անխուսափելի ու հրամայական...

Մի այլ ապացոյց:

Հէնց այս ամսին կովկասեան երեք գլխաւոր կէտերից, Երևանից, Ալէքսանդրոպոլից և Բագւից Ռուսաստան աքսորւեցին բազմաթիւ հայեր, զանազան դիրքի ու աստիճանի, ի թիւս որոց և մի քանի կանայք: Հիմունքներ, ինհարկէ, չկան և պատճառները մեծ մասամբ չինծու են և ապօրինի: Այդ բոլորը Գօլիցինի գործն է: Կալւածական պատմութիւնից յետոյ՝ նա ատամներ էր կրճտացնում և երբէք գլխից չէր հանում՝ վերսկսել „վնասակար" հայերին հեռու տեղեր քշելը: Բայց Պետերբուրգում ասացին, որ բոպէն յարմար չէ: Նա սպասեց, և ահա այժմ, երկար ջանքերից յետոյ, կարողացաւ համաձայնութիւն ստանալ և կարգադրեց՝ վերաբանալ աքսորի ճամբան: Եւ արդէն բացւած է... Խորամանկ և վախկոտ Գօլիցին, „անձամբ ինքը չի կատարել այդ բոլորը", այլ յանձնել է իր օգնականին, պատասխանատուութիւնից մի օր ազատ մնալու համար...

Դարձեալ մի ապացոյց:

„Ոչ մի ժամանակ—գրում է կովկասցի մի բարեկամ—հայոց մամուլը այնքան ճնշւած վիճակի մէջ չէ եղել, որքան այժմ, հէնց այն միջոցին, երբ մայրաքաղաքի լրագիրները՝ մամուլի ազատութեան երգեր են երգում": Ճիշդ է այդ գանգատը: Իշխան Գօլիցինի յատուկ ներշնչմամբ, կովկասեան գրաքննական ատեանը, որի նախագահի պաշտօնը ց'այժմ էլ վարում է մի ա ն գ լ ո ւ խ գօլիցինական, իր խստութիւնները հասցրել է աշխարհ ծայրայեղութեան: Ամենահնարագէտ գրողներն անգամ չգիտեն թէ ինչպէս գրեն, ինչի մասին գրեն, որ հասարակութեան առաջ երևալու բախտին արժանան: Աւելին: Գրաքննիչները, իրենց նախագահի հետ միասին ժպտում են Պետերբուրգի լրագիրների վրայ, որոնք „գարնան հովեր" են գուշակում, անտեղեակ, որ այն՝ ինչ սպասում է Կովկասի և յատկապէս հայկական մամուլին „գարնան հովեր" չեն, այլ „խստաշունչ ձմրան բուք"...

Եզրակացութի՞ւնը:

Այն, որ այդ տեսակ պարագաների մէջ—որոնցից մի քանիսը միայն յիշատակեցինք — աններելի միամտութիւնն է ազատաշունչ շնորհներ սպասել սանձարձակ ցարիզմից, աններելի մանաւանդ այն պատճառով, որ հայակեր Գօլիցին դեռ բազմած է կառավարչապետի աթոռի վրայ, մտածելով՝ „Գնամ, թէ մնամ": Ամէնից առաջ նրա գնալը պէտք է կարգադրել, ս տ ի պ մ ա մ բ ինհարկէ, և ապա թէ շ ն ո ր հ ն ե ր ի յոյսեր տածել...

Ներկայ օրերում՝ շնորհները այլևս երկնքից չեն ընկնում և ոչ էլ բռնաւորի շռթունքներից: Նրանց պէտք է ձեռք բերել... ուժեղ ձեռքերով:

Է. ԱԿՆՈՒՆԻ

Թ Ե Ր Թ Օ Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

„ՃԵՐՄԱԿ ԳԻՐՔ"

(Շարունակ. № 11-ի)

Դրութիւնը միշտ աւելի և աւելի ծանրանում է և հիւպատոսական ու դեսպանական հաղորդագրութիւնները դառնում են հետզհետէ փութկոտ, նեարդային:

Փետրուարի 23-ին (1904 թ.) Կ. պօլսի անգլ. դեսպանը հեռագրում է մինիստր Լանսդօունին, որ Մուշի շրջակայքում տեղի է ունեցել ընդհարումն հայ յեղափոխականների և հարկահանների մէջ, որ քրդերը տրամադիր են դիմելու ծայրայեղութիւնների, որ Սասունում համախմբւած 1000-ի չափ ֆէդայիները՝ պիտի իջնեն գարնանը Մշոյ դաշտը՝ խռովութիւններ առաջացնելու, որ վերջապէս, մեծ վեզիրը տեղեկացնում է իրեն, թէ մի խումբ յեղափոխականներ, Անդրանիկի առաջնորդութեամբ, իջել է Սասունից և բռնի գրաւել է մի մահմէտական գիւղ:

Մարտի 1-ին նոյն դեսպանը հեռագրում է Լանսդօունին.

„Մեծ վեզիրի հաղորդած պաշտօնական տեղեկութիւնների համաձայն՝ հայ յեղափոխականները թւով մի քանի հարիւր, Անդրանիկի առաջնորդութեամբ փորձել են գրգռել (°) մահմէտական ազգաբնակութիւնը, յարձակւելով Սասունի սահմաններում գտնւող նրանց գիւղերի վրայ, դուրս քշելով բնակիչներին եւ խլելով նրանց զէնքերը: Գինջի միւթէսարիֆը հեռագրով ծանուցանում է, որ 40 հոգուց բաղկացած յեղափոխականների մի խումբ Տալւորիկից մտել է Խիզիան գիւղը, սպանել ու ծաղրանել է (°) երեք մահմէտականների, փախցրել է երկու կին եւ շատ ուրիշ վայրագութիւններ է կատարել (°): Անդրանիկը նմանապէս զօրաւոր կերպով է հաստատւել Տալւորիկ գիւղում, ուսկից թիւրք մուդիրը եւ ժանդարմէրիայի սպան փախել են Մուշ: Ապստամբները պարզում են կարմիր դրօշակ՝ արծւի խորհրդանշանով":

Մարտի 12-ի հեռագրի մէջ դեսպ. Օկօնօր երկարօրէն ծանրանում է վտանգաւոր կացութեան վրայ և յայտնում է, որ ինքը առաջարկել է Սուլթանին՝ մտնել խաղաղ բանակցութեան մէջ Սասունի և Մուշի շրջանի նշանաւոր մարդկանց հետ և ընդհանուր ներումն շնորհելով, թոյլ տալ յեղափոխական առաջնորդներին՝ Անդրանիկին ու իր հետևորդներին՝ հեռանալ երկրից:

„Սուլթանը նկատեց, որ իմ յայտնած գաղափարը նրան թւում է ուշադրութեան արժանի եւ որ նոյն միտքը իր գլխումն էլ անցել է: Այնուամենայնիւ նա աւելի բացատրութիւն չտւեց, բայց ես զգացի, որ վաղը այդ մասին նա պիտի խորհրդակցէ մեծ վեզիրի հետ:

„Մտադիր էի յիշեցնել, որ նորին կայսրութեան Բիթլիսի փոխ-հիւպատոսը կարող էր միջնորդի պաշտօն կատարել, բայց ես չէի կարող առաջարկել այդ՝ նախ քան ձեր քննութեան ենթարկելը եւ նախ քան իմանալը, թէ ինչ չափով ռուս կառավարութիւնը պատրաստ կը լինի աջակցել մեզ՝ յիշեալ առաջարկը ընդունելու դէպքում":

Մարտ 16.

„Երեկ շարունակութիւն անցեալ 12-ի իմ հեռագրի, որով հաղորդում էի Ձերդ Գերազանցութեան՝ սուլթանին արած իմ թելադրութիւնը Սասունի եւ Մուշի շրջանների յեղափոխականների վերաբերմամբ՝ պատիւ ունիմ զեկուցանել, որ մօտ օրերս հայոց պատրիարքը կանչւել է պալատ, ուր

(Շարունակութիւնը տես երես 190)

ԹՈՐԳՈՄ

(ԹՈՒՄԱՆ ԹՈՒՄԵԱՆՑ)

—

Նա էլ զոհ գնաց արեան Աստուծուն տակաւին երիտասարդ, ծաղիկ հասակի մէջ։ Քսանուհինգ տարեկան էր միայն, բայցորքա՜ն երկար ապրեց ու զգաց նա մի քանի տարուայ իր խռովայոյզ կեանքի ընթացքում.

Պատանեկութիւնը անցկացրեց Ղարաբաղի մայրաքաղաքում.— մէկն էր այն խանդավառ ու առնական տիպարներից, որոնք ընկերական շրջաններում ղեկավարի դեր են ստանձնում և իրենց շուրջը արծարծում են հայրենիքի ու ազատութեան սէրը։

Թեմական դպրոցը աւարտելուց՝ բարձրագոյն ուսում ստանալու տենչը մղում է Նրան դէպի Մոսկուա, ուր աշխատում է ազատ ունկնդիր գրել բնագիտական բաժնում։

Հայրենիք վերադառնալով՝ նա մտնում է զինուորական ծառայութիւն, միշտ ունենալով իր գլխի մէջ հարազատ ժողովրդին ծառայելու ղեկավարող գաղափարը։

Եւ ահա Թորգոմը՝ պրապօրշչիկի, սպայի աստիճանում։ Նա գնում է Կարս և „Դաշնակցութեան“ տեղական մարմնից նշանակւում է շրջանի ընդհանուր պրոպագանդիստ։ Քարոզում է մի շարք գիւղերում, կազմակերպում է զինուորական ու դրամական խմբեր։ Այդ էլ չէ գոհացնում Նրան և՝ մրրկոտ գործունէութեան ծարաւ՝ նա Դաշնակցութեան „Մրրիկ“ խմբի հետ դիմում է դէպի արիւնի վայրը — Սասուն։

Շատ չ՚անցած, նա վերադարձաւ Կովկաս, օգնութեան գործը կանոնաւորելու համար և յուլիս ամսին, երբ նա բազմանդամ մի խմբի գլուխ անցած՝ կրկին ուղևորւում է դէպի Սասուն, իր ընկերների հետ անսպասելի կերպով զոհ գնաց Օլթիի ծանօթ եղեռնագործութեան. . .

Դարձեալ մի դժբախտ մահ, որ սակայն ցնցեց հարիւրաւոր վրէժխնդիր սրտեր։ Դարձեալ մի շիրիմ, որի շուրջը երբէք չի բանի մոռացութեան խոտը. . .

նրան յայտնել է սուլթանի առաջին քարտուղարը, որ Մուշում ու Սասունում եղած 400-ի չափ յեղափոխականներից, կարծեօք, 50 հոգի միայն եկած են Պարսկաստանից կամ Կովկասից, մինչդեռ մնացածը բուն երկրայիններ են։ Սուլթանը հրաւիրել է պատրիարքին՝ հրահանգել Մուշի իր ստորադրեալներին՝ բանակցութեան մտնելու յեղափոխականների հետ, որպէս զի համոզել նրանց՝ դրուելու եւ հասկացնել, որ ներումն պէտք է չնորհի նրանց։

„Լսում եմ, որ պատրիարքը պատրաստում է հրահանգներ ղրկել, վերուիշեալ թեկադրութեան խնամով, Մուշի եւ շրջակայքի իշխանութիւններին“։

Սկսում են խորհրդակցութիւններ անգլիական եւ ռուս ու ֆրանսիական կառավարութիւնների միջև։ Մինիստր Լանսդուն ներկայացնում է ցարի կառավարութեանը մի յիշատակագիր Հայաստանի դէպքերի ու կացութեան մասին եւ առաջարկում է, որ երկու պետութիւնների գործակալները Հայաստանում իրարու աշխատակցեն՝ տիրող տագնապին խաղաղ ելք տալու համար։ Ապա հրաւիրուում է աշխատակցութեան նաև Ֆրանսիան։

Մարտի 5-ին Բիթլիսի անգլիական փոխ-հիւպատոսը հեռագրում է իր դեսպանին.

„Պատիւ ունիմ զեկուցանելու, որ Կուրդան Բայրամի տօների միջոցին, ես երկու մահմէտական աղբիւրներից տեղեկացայ, որ հայերի դէմ յարձակման ծրագիր է յղացուած. յարձակումը տեղի պիտի ունենար տօներից յետոյ եւ նրա պատճառը, ըստ երեւոյթին, այն է՝ որ յեղափոխականների դիրքը Սասունում դարձել է մի վտանգ մահմէտականների համար։

„Վերջին ի պատասխան իմ արած խիստ ցոյցերին՝ շատ դրականապէս հաւատիացրեց ինձ, որ պիտի ապահովէ լիակատար խաղաղութիւնը. թէեւ չէ կարծուում, որ խռովութիւն ստեղծելու ոչէ յանկութիւն լինի։ Կ. Պոլսից ստացուեց հեռագիր, որը խստիւ հրամայում է ձեռք առնել ամէն տեսակ նախազգուշութիւններ խռովութիւնների դէմ եւ ես կարծում եմ, որ ոչ մի խռովութիւն չի ծագի այստեղ, եթէ քրդական պարագլուխները եւ տեղական իշխանութիւնները հասկանան, որ կենտրոնական կառավարութիւնը իրաւք որոշած է պահպանել կարգը“։

Ապրիլի 8-ին Օկսնոր հեռագրում է Լոնդոն.

„Տեղեկանում եմ, որ հայ եպիսկոպոսների միջնորդութիւնը մերժուել է յեղափոխականների կողմից այն պատճառաբանութեամբ՝ որ սուլթանի ներման խոստումների իրագործման համար տրուած երաշխաւորութիւնը գոհացուցիչ չէ. բայց եթէ այդ խոստումները տրուին եւրոպական հիւպատոսների միջոցով, նրանք պատրաստականութիւն են յայտնում զէնքը ցած դնել“։

Ապրիլի 15-ին Լանսդուն հեռագրում է Պետերբուրգի անգլիական դեսպանին.

„Ռուսաց դեսպանը ասաց ինձ այսօր, որ Կ. Պոլսի ռուսական դեսպանին հրահանգուած է աշխատակցել իր ֆրանսիական եւ իտալական պաշտօնակիցների հետ՝ ջանալու համար լաւ յարաբերութիւններ հաստատելու Սասունի եւ Մուշի շրջակայքում։ Ռուս կառավարութիւնը տեղեկացել է, որ տաճկական շատ մեծ զօրք է կենտրոնացուած Հայաստանի այդ մասում, թուով, ենթադրաբար, մօտ 38,000 մարդ, մի ուժ, որ ռուս կառավարութեանը թուում է չափազանց, որ կարող է հասցնել լուրջ խռովութիւնների եւ գուցէ հայերի ընդհանուր կոտորածի։ Կ. Պոլսի ռուսաց դեսպանը հրաւիրել է Բ. Դրան ուշադրութիւնը այդ խնդրի վրայ եւ յոյս է յայտնել, որ դեսպան Օկսնոր եւս հրահանգ կրաւանայ նոյնը անելու։ Ես խոստացայ նրան՝ քննել իրողութիւնը“։

Ուշադրութեան արժանի է Բիթլիսի անգլ. փոխ-հիւպատոս Հէթկոտի ապրիլի 2-ի հեռագիրը, ուղղուած դեսպան Օկսնորին։ Փոխ-հիւպատոսը ծանուցանում է տխրահռչակ Ֆէրիտ պէյի գալուստը և հաղորդում է իր տպաւորութիւնները նրա հետ ունեցած տեսակցութիւններից։ Հէթկոտի կարծիքները Սասունի մասին երկիւղ ու ժատանջութիւն են պատճառում նորեկ վալիին և նա անձկութեամբ հարց է տալիս Անգլիայի ներկայացուցչին՝ արդեօք թիւրք կառավարութիւնը պէ՞տք է ուժ գործ դնէ յեղափոխականների դէմ։ — Այո՛, պատասխանում է փոխ-հիւպատոսը, „եթէ միայն վստահ էք, որ զինուորներն ու սպաները չեն չափազանցնի իրենց տրուած հրահանգները և չեն խառնի անմեղներին յանցաւորների հետ“։

Գեղեցիկ խօսքեր, որոնք, սակայն, գործնական սանկցիա չստացան յետագայում...

Այդ հեռագրի մէջ փոխ-հիւպատոսը հերքում է նաև թիւրք կառավարութեան տարածած տենդենցիոզ լուրերը, իբր հայերը նախայարձակ ու գրգռող են հանդիսանում, իբր թէ Սասունի յեղափոխականները բռնութեամբ տիրել են քսանուհինգ մահմէտական գիւղերի։

Հետաքրքրական են նոյն հեռագրի մէջ և հետևեալ խօսքերը. „Նրան (Ֆէրիտ պէյին) սկզբում փոքր ինչ անակնկալ պատճառեց, երբ ես յայտնեցի իմ համոզումս՝ որ եթէ մի քիչ արդարութիւն հաստատուէր երկրի մէջ, կոմիտէներն ու ապստամբները փոքր աջակցութիւն միայն կը գտնէին“։

Իր ծրագիրները դիւրութեամբ իրագործելու և Եւրոպայի առջև արդարանալու համար՝ թիւրք կառավարութիւնը, ըստ սովորութեան, չէ վարանում շինծու պատրուակների առաջ. նա հաւատացնում է, ապրիլի վերջերում, անգլիական դեսպանին, որ Հայաստանը լի է ֆէդայիների զօրքերով, որ 3-4000 ֆէդայիներ հաւաքուած են Վանի շրջակայքում ու Բասենի շրջանում։

Եւ դիւանագիտութիւնը հակամէտ է երևում՝ լուրջ ընդունելու այդ չափազանցութիւնները. բաւական է, որ նրա այս կամ այն գործակալը մի կերպ տեղեկանում է ոչէ խմբի արշաւանքի մասին... Այդպէս օրինակ, Ապրիլի 11-ին, Վանի անգլ. փոխ-հիւպատոսը իր ընդարձակ զեկուցագրի մէջ հաղորդում է, որ „յեղափոխականները շարունակ գալիս են Վան, քրդերի ձևով հագնուած, և քրդերը պատրաստականութիւն են ցոյց տալիս օգնելու նրանց սահմանը անցնելու և ամեն կերպ աջակցելու նրանց, լուրի վարձատրութեան փոխարէն“։

*

Կռիւների և տագնապի շրջանն է հասնում... Դեսպանների տեսակցութիւնները դառնում են աւելի յաճախակի, տեղեկագիրները՝ աւելի յուզիչ։ Եւ այնուամենայնիւ — ոչ մի վճռական քայլ... Դիւանագիտութիւնը անշարժ հանդիսատես է լինում Սասունի լեռներում խաղացող ողբերգութեան, նա շարունակում է իր պարապ, անուժ դիմումները, մինչև որ հայ արծիւները, մի քանի յաղթական կռիւներից յետոյ՝ սկսում են իրենց ճակատագրական ու արհաւրալի նահանջը...

Եւ դարձեալ մեծագոյն յանցաւորը այդ յապաղումների մէջ... ռուսական դիւանագիտութիւնն էր, հայութեան մահացու թշնամին։ Անգլիան, ըստ առաջնոյն, միայնակ միջամտելու տրամադիր չէր։ Ֆրանսիան էլ չուզեց ոչէ լուրջ քայլ անել առանց իր դաշնակցի։ Անգլիայի ներկայացուցիչները, մինիստրից սկսած մինչև փոխ-հիւպատոսները, ցոյց են տալիս, ինչպէս այդ տեսնում ենք դոկումենտի ընթերցումից, բաւական եռանդ ու փութկոտութիւն։ Այն ինչ Զինովիէվ, ռուսական դեսպանը

գրեթէ միշտ յայտնում է կրաւորական դերում, և դըժբախտաբար, ազդում է Ֆրանսիայի ներկայացուցչի վրայ։

Մայիսի 11-ին, երբ արդէն շատ բան անցել դարձել էր, Ջինօվիէվը ի պատասխան անգլիական դեսպանի դիմումներին, Սասունի անցքերի առիթով, յայտնում է, որ հրահանգել է ռուսաց հիւպատոսին՝ միաբանել Բիթլիսի անգլիական հիւպատոսի հետ... Իսկ ռուսաց հիւպատոսը, դեսպանի ասելով, դեռ նոր էր ճանապարհւել Թիֆլիսից դէպի Բիթլիս...

Անգլիական դեսպանը նոյնիսկ միջամտութեան որոշ ծրագիր էր կազմել։ Վերին աստիճանի հետաքրքրական է Մայիսի 12-ի նրա հեռագիրը, ուղղւած Բիթլիսի անգլ. փոխ-հիւպատոսին.

„Վանի ֆրանսիական հիւպատոսին հրահանգւած է իր դեսպանի կողմից՝ գնալ անմիջապէս Մուշ եւ խորհրդակցել ռուսաց հիւպատոսի ու Ձեզ հետ՝ արդիւնաւոր միջնորդութեան հնարաւորութիւնների մասին։ Ուստի խնդրում եմ անմիջապէս գործի դիմել։

„Աւելացնում եմ, Ձեզ իրազեկ դարձնելու եւ ղեկավարելու համար, մի տեղեկութիւն, թէ ինչպէս են վարուել հիւպատոսները Զէյթունում, 1896-ի իրենց միջնորդութեան ժամանակ։

„Հիւպատոսները բաւականաչափ զինուորների հետ մօտեցել էին ապստամբների բանակին, կանչել էին պարագլուխներին եւ հաղորդել էին նրանց թիւրքերի առաջարկած՝ անձնատուր լինելու պայմանները։ Եւ երբ այդ պայմանները ընդունել են փոքրիկ փոփոխութիւններով, այն ժամանակ հիւպատոսները իրենց կավասներով շրջապատել են պարագլուխներին եւ առաջնորդել նրանց դէպի ծով, ուր նաւ են նստեցրել դէպի Եւրոպա։ Պայմաններն էին՝ քրիստոնեաների համար կեանքի ապահովութեան երաշխաւորութիւն, մահմէտական հարեւանների զինաթափութիւն, ներումն, պատերազմական զէնքերի յանձնումն, մի քանի տարով հարկատուութեան դադարեցումն եւ այլն"։

Ուշ եկաւ միջնորդութեան այդ խեղճ ծրագիրը... Վայրենի հորդաները արդէն տակն ու վրայ էին արել Սասունը, խորտակել էին հայկական դիմադրութեան վերջին հերոսական ճիգերը...

Տեսնենք, ինչպէս են նկարագրւած Սասունի կռիւներն ու կոտորածները Ճերմակ գրքի էջերում։

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՂԱՆԴԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՅԵՂԱՓՈԽ. ՇԱՐԺՄԱՆ ՄԷՋ

(ՌՈՒՍԱԿԱՆ ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏԻԱ)

—

Կուսակցութիւնների ճակատագիրը, նրանց աստիճանական բարգաւաճումը կամ քայքայումը, հնազանդւում է ոչ միայն նրանց դաւանած սկզբունքների ուժին, այլև այդ սկզբունքները կրող ու արծարծող գործիչ-անհատներին։ Անհատները իրենց խառնւածքով, մտաւոր ու բարոյական կերպարանքով աչողում են իրենց յատուկ կնիքը գնել այս կամ այն կազմակերպութեան վրայ, նրանք կարողանում են՝ կամ մօտեցնել կազմակերպութիւնը կեանքին, հիւսել նրա սկզբունքներն ու թէօրիաները կենդանի իրականութեան վրայ և այդպիսով ապահովել նրա յարատև բարգաւաճումը, -- կամ թէ խոտորել կազմակերպութիւնը կեանքից, դարձնելով նրան սորուկ՝ որոշ, քարացած դոգմաների, փակելով նրան մի տարամերժ կղզիացման մէջ, մղելով նրան դէպի անխուսափելի կազմալուծում։

Ամէն մի հասարակական վարդապետութիւն, իր լաւ, համակրելի կողմերով հանդերձ, արտադրել է միշտ ֆանատիկոսների լէգիոններ, որոնք հասցրել են վարդապետութիւնը ամենաայլանդակ ծայրայեղութիւնների՝ անհամբերողութեան, բանադրանքների ու հալածանքի։

Մարքսիզմը բացառութիւն չկազմեց վարդապետութիւնների այդ ընդհանուր ճակատագրի մէջ։

Մի մեծ, հոյակապ աշխարհայեցութիւն, որ եկաւ իր հանճարեղ հեղինակի բերանով մահւան դատավճիռը արտասանելու կապիտալիստական հասարակութեան դէմ, մի ճոխ ու բեղմնաւոր թէօրիա, որ նոր հօրիզոններ բաց արեց հասարակական գիտութեան առջև, հրապարակ հանելով տնտեսական գործօնների ահագին, գերիշխող դերը հասարակութիւնների էւօլիւցիայի մէջ, մի վարդապետութիւն, որ առաջին անգամը փորձեց գիտութեան անունով ներրագործել սօցիալիզմի մեծ հօսանքը, ցոյց տալով նրա տարերային բնաւորութիւնը, նրա յաղթանակի ճակատագրական անհրաժեշտութիւնը, — ահա մարքսիզմը՝ իր էական ու տևողական առանձնայատկութիւններով։ Նրա հեղինակները — Մարքս և Էնգէլս — այդպէս էլ ըմբռնում էին իրենց վարդապետութեան հասողութիւնը։ Այն մտքերն ու իրողութիւնները, որ նրանք փոքր ինչ յախուռն կերպով ազդարարել էին անցեալ դարու 40 թւականներին, երբ թէ իրենք և թէ հասարակական գիտութիւնները դեռ չափազանց երիտասարդ էին, — ժամանակի ընթացքում՝ մասամբ արդէն իրենց իսկ ձեռքով՝ սրբագրւեցին ու լրացւեցին, — մնում էր նրանց մահից յետոյ ևս շարունակել նոյն ուղղութեամբ, բայց... աշակերտական մոլեռանդութիւնը ըմբոստացաւ և, փոխանակ սրբագրելու, հետզհետէ ստեղծեց Մարքսի և Էնգէլսի գաղափարներից մի անշարժ սիստէմ, մի քարացած դոգմա, որի այս կամ այն յօդւածի դէմ առարկողները հրատարակւում էին հերձւածողներ, ուտօպիստներ, բուրժուազական իդէօլոգներ ևայլն։

Մարքսիզմը դարձաւ տգէտ ու գիտուն նորահաւատների աչքում անխախտականութեան մի տեսակ մարմնացում, գերագոյն ու բովանդակ ճշմարտութեան արտայայտութիւն և ինչ որ դուրս է նրա տեսակէտից — լինի գիտութեան, փիլիսոփայութեան կամ գեղարւեստի վերաբերեալ — սխալ է, անպէտք, „բուրժուազական"։ Անպէտք են և բոլոր միւս սօցիալիստական-պրօլետարական հօսանքներն ու կուսակցութիւնները, որոնք չեն ուզում ղեկավարւել մարքսիզմի „հաւատոյ հանգանակով"...

Ուղղափառութեան, նեղ, անհամբերող դօքտրինեօրութեան այդ երևոյթը չէր կարող, իհարկէ, լայն տարածում գտնել Արևմուտքում, ուր կրիտիքական, քննական միտքը արդէն դարերի պատմութիւն ունի։ Եւ այդ պատճառով, չնայած Գէդերի ու Կաուցկիների մոլեգին բանադրանքներին, չնայած նրանց պապական բուլլաներին՝ Ժօռէսներն ու Ֆօլլմարները շարունակում են բազմած մնալ պարլամենտների մէջ ամենաուղղափառ սօցիալ-դէմօկրատների շարքերում, իսկ սօցիալիզմի միջազգային կօնգրէսների մէջ պատւաւոր տեղ են գրաւում մարքսիստ ու ոչ-մարքսիստ կուսակցութիւնների հետ՝ նոյնիսկ շատ չափաւոր, կէս-սօցիալիստ Տրէդ-Իւնիօնիստները, Մեծ Բրիտանիայի այդ հսկայական կազմակերպութիւնը, որ տակաւին չէ իւրացրել սօցիալիստական կռւի եղանակը, ոչ նրա թէօրիաները։

*

Արևմուտքում անզօր՝ դօքտրինեօրութեան հակակրելի երևոյթը պարարտ հող է գտնում խոպան, կիսամշակ Ռուսաստանի մէջ։ Սօցիալիստական ճշմարտութիւնները քարոզւում և իւրացւում են այնտեղ պարզ ու բացարձակ ձևով և մասսան, ինտելիգենտ ու անուս, մեծ մասամբ կուրօրէն հետևում է սօցիալիստական „առաքեալներին“... որոնք, տարաբախտաբար, իրենց կողմից հանդիսանում են կոյր հետևողներ արևմտեան սօցիալիստ մտածողների...

Այնտեղ, ուր չկայ քննադատական միտք, ուր տիրող ռէժիմը խեղդում է ազատ մտքի ամէն մի թուիչք, ուր չկայ խնդիրների բազմակողմանի ուսումնասիրութիւն,— մտքերը սովորաբար հակւած են լինում դէպի բացարձակ ու տարամերժ հաստատումներ (affirmations absolues), դէպի պարզամտութիւն (simplisme)և միևնոյն ժամանակ դէպի հլու հնազանդութիւն գլխաւորներին, որոնց խօսքերը ընդունւում են որպէս պատգամներ։

Ոչ մի տեղ գուցէ նորընծայական ֆանատիկոսութիւնը այնքան սիրահար չէ բացարձակ ֆօրմուլների, ինչպէս ցարերի թագաւորութեան մէջ։ Եւ ռուս Սօցիալ-դէմօկրատիան, որ սօցիալիստական գաղափարների ամենալայն չափով տարածողն է համարւում Ռուսաստանում՝ հաւատարիմ թարգմանն է այդ առանձնայատուկ տրամադրութեան։

Հարկ է մի անգամ բնորոշել այդ տարածւած կուսակցութեան ընդհանուր կերպարանքը, քանի որ նրա անունով այսօր խօսում ու գործում են նաև մեր երկրում, քանի որ նրան գուցէ վիճակւած է, ի շարս ուրիշ կուսակցութիւնների, կարևոր դեր խաղալ Ռուսաստանի վերակազմութեան գործում։

Ողջունելով հանդերձ այն անձնուէր, կորովի զինուորներին, որոնք գործելով այդ կուսակցութեան դրօշակի տակ, անխոնջ պրօպագանդ են մղում, զարգացնում են աշխատաւոր դասի ինքնագիտակցութիւնը և հարիւրներով տառապում են ռուսական բանտերում, մենք չենք կարող մատնանիշ չանել և այն ճակատագրական ծայրայեղութիւնների վրայ, որոնք այսօրւայ Սօցիալ-դէմօկրատիայի վերքերն են կազմում և ոչ միայն ընասում են ազատութեան դատին ընդհանրապէս, այլև արագօրէն լափում, լուծում՝ են նոյն իրեն Սօցիալ-դէմօկրատիային։

Ամէն ոք գիտէ, որ երէկւայ այդ մեծ կուսակցութիւնը այժմ կատարեալ ճգնաժամ է ապրում։ Անսանձ դօքտրինեօրութիւնը, կազմակերպութեան կենտրօնական սիստէմը, դէպի ազգային խնդիրը բռնած ոչ-համակրելի դիրքը, վարիչ կենտրօնների ու անհատների ծայրայեղ անհամբերողութիւնը՝ ոչ միայն անջատել են այդ կուսակցութիւնից հրէական „Բունդ“-ի պէս հզօր կազմակերպութիւնը, ոչ միայն կուեցրել են նրա հետ բոլոր միւս կուսակցութիւններին, այլև անվերջ երկպառակութիւններ են ձգել Սօցիալ-դէմօկրատիայի մէջ, ստեղծելով նրա գրկում երկու և աւելի հակամարտ „կուսակցութիւններ“...

Եւ ահա այսօր, պատմական այս եզակի, ծանրակշիռ վայրկեանում, երբ բռնապետութեան խարխուլ շէնքը երերում է արտաքին թշնամու հարւածներից, երբ կայսրութեան մէկ ծայրից միւսը, բոլոր ազգերի և դասակարգերի մէջ, այնքան խորապէս զգացւում ու շեշտւում է ըմբոստ ուժերի միացման անհրաժեշտութիւնը, երբ ֆինլանդացիների պէս մեղմ ու չափաւոր ազատամիտները խիզախում են գլուխ կանգնել յեղափոխական համերաշխութեան պրօպագանդին և աջողում են ի մի գումարել, խորհրդակցութեան համար, ռուս, լեհ, հայ, լատիշ, վրացի ևլն՝ ազատամիտ, սօցիալիստական ու ազգայնական կազմակերպութիւններ՝ որոնք թէպէտ և շատ այլատարբ, շատ իրարից տարբեր, բայց բոլորն էլ տոգորւած են անհաշտ ատելութեամբ դէպի բռնապետութեան հաստատութիւնը — այսքա՜ն նշանակալից մի վայրկեանում անգամ՝ ռուսական Սօցիալ-դէմօկրատիան, նրա կենտրօնը հրապարակ է հանում իր մոլեռանդ դօքտրինեօրութիւնը, նեղ-կուսակցական իր տեսակէտը և մերժում է իր մասնակցութիւնը մի Խորհրդաժողովի՝ որը նպատակ ունի համաձայնեցնելու կայսրութեան այլևայլ կուռ տարրերը և ընդհանուր ուժերով դրոհ տալու միապետութեան դէմ։ Մերժումը պատճառաբանւում է նրանով, որ Խորհրդաժողովին մասնակցում են բուրժուազական տարրեր՝ ռուս դէմօկրատ ազատամիտները („Օսվօբօժդէնիէի“ կուսակցութիւնը), լեհ ազգային դէմօկրատները (Պոլսկա Լիգա Նարոդովայ ևայլն...

Սա արդէն անսպասելի, շշմեցնող մի իրողութիւն էր, մի անակնկալ նոյնիսկ նրանց համար, որոնք լաւ գիտէին թէ ինչ մթնոլորտ է տիրում Սօցիալ-դէմօկրատիայի վարիչ շրջաններում։

Այդպէս է վարւում մի կազմակերպութիւն, որը իր ընդհանուր ժողովների մէջ հանդիսաւոր կերպով յայտարարում է, որ պատրաստ է, ցարիզմի դէմ կուելու համար, ձեռք մեկնել բոլոր ոչ միայն յեղափոխական, այլ նոյնիսկ սոսկ ընդդիմադիր տարրերին։

Այդպէս են ներդաշնակւում խօսքը և գործը մի բազմանդամ կազմակերպութեան մէջ, որը յաւակնում է ղեկավարել վիթխարի երկրի ճակատագիրը։

Այդպէս է զոհաբերւում կենդանի գործը՝ էնտրանզիժան ֆօրմուլներին, գձուձ ու նեղսիրտ աղանդականութեան։

Կարդացէ՛ք միայն „Իսկրա“ թերթը, այդ կուսակցութեան կենտրօնական օրգանը։ Նոյնիսկ այժմեան ծանր վայրկեաններում՝ կենդանի գործը չէ, որ զբաղեցնում է նրա էջերը, այլ անվերջ, տաղտկալի բանակռիւները՝ թէօրիական խնդիրների մասին — մատերիալիզմի, ուղղափառութեան, օպպօրտիւնիզմի ևայլն — ուր արամազգեան շանթեր են թափւում... և՛ Ժօռէսի դէմ, և՛ սօցիալիստ յեղափոխականների դէմ, և՛ լեհ սօցիալիստ կուսակցութեան դէմ, և՛ բունդիստների ու վրացի ինքնավարականների դէմ, և՛ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դէմ... Դրանք բոլորը, ընթերցող, մի-մի ահարկու թշնամիներ են Ազատութեան համար, կարծես նոյնիսկ աւելի ահարկու, քան ինքը ցարիզմը... Եւ Սօցիալ-դէմօկրատիայի վարիչ օրգանը, որի գլուխն են կանգնած ամենամոլեռանդ դօքտրինեօր-մարքսիստները, անընդհատ արշաւում է այդ բոլոր ուժերի դէմ, որակելով նրանց մի քանի շաբլօնական ածականներով,—նրանք բոլորը „նացիօնալիստներ“ են, „օպպօրտիւնիստներ“, „բուրժուաներ“, „յետադէմներ“...

„Նացիօնալիստ“ բառը, մանաւանդ, մօդա է։ Նա գործածւում է թէ՛ վարդապետների և թէ՛ նորընծաների կողմից մի առանձին շեշտով, մի առանձին հեգնութեամբ։ Նա հոմանիշ է ամենավատիմաստ ածականների։ Նա-

ցիոնալիստը բոլոր սև ուժերի անձնաւորումն է. նա անպայման և՛ „բուրժուա“ է և՛ ազգահալած և յետադէմ։ „Նացիոնալիզմ“ բառով սոցիալ-դէմոկրատները որակում են ոչ միայն ծայրայեղ, թթու հայրենասիրութիւնը, որ վտարած է բոլոր յեղափոխական կուսակցութիւնների ծրագիրներից, ոչ միայն ազգային անջատման ու անկախութեան ձգտումները, այլև առհասարակ ամէն մի ձգտում, որ նպատակ ունի բարձրացնել հարազատ ժողովրդին, պաշտպանել նրա բռնաբարած իրաւունքները և մղել նրան դէպի քաղաքակրթութեան ճանապարհը, զարգացնելով նրա հաւաքական դրամագլուխը՝ լեզուն, գրականութիւնը և այլն։

Նացիոնալիստ են, մի խօսքով, բոլոր նրանք, որոնք չեն ուզում մարսել, լուծել մի միայնակ կազմակերպութեան — Սոցիալ-դէմոկրատիայի մէջ և մի միայնակ ժողովրդի — ռուս ազգութեան մէջ... Այդպէս են ռուսաց սոցիալ-դէմոկրատները կիրառում գործնականի մէջ իրենց հռչակած տեսական մաքսիմը՝ „ամէն մի ազգ ունի իրաւունք ինքնաորոշման“։ Անաչառ դիտողին միանգամայն պարզ է, թէ որ կողմն է բուն, հակակրելի „նացիոնալիզմը“։

Մարքսիզմից դուրս՝ „չէք փրկութիւն“. ով որ չէ գործում Սոցիալ-դէմոկրատիայի դրօշակի տակ՝ յետադէմ է, — ահա ընդունուած նշանաբանը։ Եւ մի ողբալի ֆանատիկոսութեամբ՝ ոտնակոխ են լինում տարրական շիտակութեան սկզբունքները, ծաղրւում, սրբապղծւում են հակառակորդի արած գործերը, թէկուզ և լինեն նրանք յեղափոխական կորովի փայլուն, վսեմ արտայայտութիւններ։

Երէկ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, բոլոր դէմոկրատ ու սոցիալիստ կուսակցութիւնները, հիացմունքով ծափահարում էին Պլէվէի տեսարը և նրա սատարող՝ Սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեանը. — իսկ ռուսական Սոցիալ-դէմոկրատիայի ամենահեղինակաւոր ներկայացուցիչը, „Իսկրա“-ի խմբագիր Պլէխանովը, գերմանական սոցիալ.-դէմ. կենտրոնական օրգան Vorwärts-ի մէջ հռչակում էր ի լուր աշխարհի, թէ այդ տեսարը յետադէմ է և վնասակար, ինչպէս յետադէմ է և նրա հեղինակ՝ Սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը։

Մինչ ո՞ր աստիճան կուսակցական նախանձը կարող է կուրացնել մարդկանց, բթացնել նրանց մէջ ազնուութեան, նոյնիսկ տարրական վայելչութեան բնազդը...

Հակառակորդութեան ախտը չափազանց ակներև էր և Vorwarts պատասխանեց։ Զետեղելով հանդերձ Պլէխանովի յօդուածը, խմբագրութիւնը կցեց նրան մի դիտողութիւն, որի մէջ յայտարարում էր, թէ չէ բաժանում յօդուածագրի յայտնած կարծիքները...

Մի երկրորդ անգամ քաղաքավարի ապտակ ստացաւ ռուս Սոց.-դէմոկրատիայի վարչական կենտրոնը՝ Ամստերդամի միջազգային սոցիալիստական կոնգրէսի կողմից։ Կուսակցական մրցակցութիւնից դրդուած՝ այդ կենտրոնը միշտ ձգտում է վարկաբեկ անել ռուս սոցիալիստ-յեղափոխականներին, ցոյց տալ, որ միմիայն սոցիալ-դէմոկրատիան է սոցիալիզմի կրողը ամբողջ Ռուսաստանում։ Ամստերդամի կոնգրէսից քիչ առաջ՝ Ս. Դ. կուսակցութեան կենտրոնը ազդարարում էր, որ պիտի պարզէ արևմտեան Եւրոպայի սոցիալիստ ընկերներին, որ „Ռուսաստանի մէջ համաշխարհային սոցիալիզմի շահերը ներկայացնում են միմիայն սոցիալ-դէմոկրատները. նա յայտարարում էր, որ պիտի աշխատէ, որ Սոցիալ-դէմոկրատիան միջազգային սոցիալիստական կոնգրէսների մէջ՝ միայնակ ներկայացնէ ռուս բանւորական շարժման շահերը։

Այդ սպառնալի ազդարարութիւնը ուղղուած էր սոց.-յեղ. կուսակցութեան դէմ, որը ըստ „Իսկրա“-ի, հանդիսանում է իբրև մանր-բուրժուազական, նոյնիսկ յետադէմ, քարոզում է կեղծ սոցիալիզմ, գործադրում է վնասակար տաքտիկ (տեռորական միջոցներ) և այն։

Պարապ սպառնալիք։ Սոց.-յեղափոխական կուսակցութիւնը ոչ միայն իր յատուկ ներկայացուցչութիւնն ունեցաւ Ամստերդամի համաժողովում, այլև իբրև Ռուսաստանի ջոկ սոցիալիստական մարմին՝ իր առանձին ձայնը ստացաւ միջազգային սոցիալիստական Բիւրոյում։ Դա մի անողոքմ ու անմոռանալի դաս էր աղանդաւորների համար...

Բուրժուազական ու յետադէմ է համարւում մի կազմակերպութիւն, որը շարունակ՝ թէ իր կենտրոնական օրգանի, թէ բազմաթիւ հրատարակութիւնների մէջ և թէ անձնուէր քարոզիչների միջոցով՝ ոչ միայն անդուլ պրոպագանդ է մղում սոցիալիզմի գաղափարների համար, այլև քարոզում է բուն յեղափոխական տաքտիկ երկրի անհամար դահիճների դէմ, մի կազմակերպութիւն, որ ծնել է Կարպովիչի, Բալմաշովի, Սազոնովի պէս հերոսատիպ դէմքեր, և որի տարածած սարսափի շնորհիւ՝ առաջ եկաւ մոքերի ներկայ հսկայական խմորումը ամբողջ Ռուսաստանում, — նոր ռէժիմը իր հաշտարար քաղաքականութեամբ, մամուլի չտեսնուած ազատութիւնը, զեմստվոների ուժգին խլրտումը և սահմանադրութեան բարձրագոչ աղաղակները. — Սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը մեղադրւում է յետադիմութեան ու բուրժուազականութեան մէջ, լոկ այն պատճառով, որ նա հակառակորդ է, որ նա չէ դաւանում Սոցիալ-դէմոկրատիայի պաշտած թէօրիաները...

Ցանկալի է, Ռուսաստանի յեղափոխական շարժման պատի և աջողութեան համար, որ Vorwarts-ի ու Ամստերդամի կոնգրէսի օրինակով նախազգուշացնող դիտողութիւններ ըստ կարելւոյն յաճախ անուէին — մանաւանդ, իր իսկ կուսակցութեան անդամների կողմից — Սոցիալ-դէմոկրատիայի վարիչ շրջաններին, նրա կենտրոնական օրգանին, որը սկզբից ի վեր իր բռնած ընթացքով, գրգռիչ տոնով, պոլեմիկական վայրիվերոյ ձևերով՝ ոչ թէ նպաստում է յեղափոխական կուի ամբողջացման, այլ միայն աջողում է երկպառակութիւն սերմանել ներսում, կազմալուծել դիմադրական շարժումը, յեղափոխական գործը։

Քննադատութեան սկզբունքը վեհ է, պաշտելի, բայց պէտք է երես դարձնել մի խեղտուկ ու վարակիչ մթնոլորտից, ուր „ուղղափառ“ շէֆերի խնամքով մի տեսակ պաշտամունք է դարձել հակառակորդին à tout prix սևացնելու, ցեխոտելու տենչը, ուր ամէն մի նորակնունք՝ մի քանի սիմպլիստ ֆրազներով զինուած՝ իրաւունք է համարում անսահման անձնապաստանութեամբ քննադատել այնպիսի մարմիններ, որոնք երկար տարիների ընթացքում բռնակալական արհաւիրքների մէջ պատւար են կանգնել ժողովրդային ազատական շարժման։

Քննադատութեան սկզբունքը վեհ է, անհրաժեշտ, բայց աւելի ևս անհրաժեշտ է — ռուսական ահռելի իրականութեան մէջ, մանաւանդ այժմեան ժամանակ — ձգտել

որոնել այլեւայլ կուսակցութիւնների շփման կէտերը և ուղղել նրանց, ներդաշնակ ու բուռն գործակցութեան ճանապարհով, դէպի ընդհանուր նպատակակէտը — միապետութեան բռնի տապալումը:

Դա մի պահանջ է, որի դէմ ընթանալը, ներկայ պատասխանատու վայրկեաններում, աններելի պարտազանցութիւն է, ծանր ոճիր:

Vorwärts-ի ԿԱՐԾԻՔԸ

Հրատարակելով Պարիզի Խորհրդաժողովի արձանագրութիւնը, գերմանական Սոցիալ-դեմօկրատիայի կենտրոնական օրգանը նկատում է, որ նրա տակը չեն ստորագրել Ռուսաստանի, Լեհաստանի ու Լիտվայի սոցիալ-դեմօկրատական կուսակցութիւնների ներկայացուցիչները և այդ առթիւ հետեւեալն է ասում. „Մենք չգիտենք նրանց ձեռնպահութեան պատճառները, բայց կարծում ենք, որ ներկայ հանգամանքներում Ռուսաստանի բոլոր ուժերի դաշնակցութիւնը բռնապետութեան դէմ՝ վերին աստիճանի ստիպողական է“:

Ապա Vorwarts-ը միութեան հրաւէր է կարդում իրենց, սոցիալ-դեմօկրատներին. „Յոյս ունենք շուտով իմանալ, որ կայացել է ձեւական համաձայնութիւն, „բլօկ“ սոցիալ-դեմօկրատ կուսակցութիւնների միջև: Այդ երկու „բլօկները“, ապագայ սոցիալ-դեմօկրատականը, որ մենք ջերմապէս փափագում ենք, և այն, որ արդէն կայացել է սոցիալիստների, ռամկավարականների ու ազգային կուսակցութիւնների միջև — մէկտեղ կը կազմեն այնպիսի ուժ, որը կորովի և հմուտ կերպով օգտուելով ներկայ դրութեան չափազանց բարեյաջող պայմաններից, պիտի կարողանայ յաղթանակի հասցնել ռուսական ազատութիւնը“:

Ուրախ ենք ծանուցանել, որ ժողովի որոշումներին արդէն յարել են՝ 1) Ֆինլանդական բանուոր. կուսակցութիւնը և 2) Բէլօռուսական սօցիալիստ կուսակցութիւնը: Իսկ հրէական սոցիալ-դեմօկրատական „Բունդը“ յայտարարում է, որ չմտնելով հանդերձ կայացած համաձայնութեան մէջ՝ նա պատրաստ է, այնուամենայնիւ, գործել այնպէս, որ „իր և համաձայնուած կուսակցութիւնների միջև պահպանուի որոշ միութիւն, մի բան, որ անհրաժեշտ է աւելի աջող յարձակման համար՝ բռնապետական ռէժիմի վրայ: Մենք, ուրեմն, սիրով կը դիմաւորենք ամէն մի նախնական բանակցութիւն և համաձայնութիւն, որքան այդ պահանջում է գործողութիւնների յիշեալ միութիւնը, որ կարող է համառօտակի ձեւակերպուել գերմանական դարձուածով՝ Getrennt marschieren, zusammen schlagen, (զատ-զատ գնալ, մէկտեղ հարուածել)“:

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

ԱՔՍՈՐՆԵՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Հակառակ Պետերբուրգի „ազատամիտ“ տրամադրութեան, Կովկասում շարունակւում է հալածանքի թագաւորութիւնը, չեղչուած սաստկութեամբ: Դրա մի նոր ապացոյցը այն աքսորներն են, որոնք տեղի ունեցան Կովկասում, մանաւանդ Երևանի նահանգում հոկտեմբերի վերջին:

Միմիայն Երևանի քաղաքից աքսորուեցին 14 հոգի. Ս.Հա նրանց անուանացուցակը. — Տ. Տէր Յակոբեանց՝ քաղաքային վարչութեան անդամ: Վ. Եղիազարեանց և Ս. Տէր Մարտիրոսեանց՝ բանկային հաստատութիւնների կառավարիչներ: Գ. Խանազատեան, Գ. Ահարոնեան՝ վաճառականներ: Ն. Նազարէթեան՝ հաշուապահ: Կ. Մուշեղեան և Գ. Գեղամեան՝ օֆիցերներ: Ար. Ալօեանց և Ար. Յակովբջանեան՝ գիւղատնտեսներ: Ա. Շուշանեան՝ կօնսիստորիական նախկին պաշտօնեայ: Տիկիններ՝ Ամիրխանեան, Տէր Սարգսեան և Տրդատեան:

Նոյն համեմատութեամբ աքսորներ տեղի ունեցան նաև Ալէքսանդրօպօլում և այլ տեղերում, սակայն նրանց անուանացուցակը դեռ չունինք:

Մարդիկ աքսորւում են առանց ապացուցուած յանցանքի, անհիմն կերպով: Բաւական է մի լուր, վաճառուած պօլիցիականի կամ այլ պաշտօնեայի մատնութիւնը, որպէս զի ամենաանմեղ մարդիկ կալանուին և անուան տեղը արտաքսուին:

Այս աքսորների հետ կապուած է մի փաստ, որ արժէ արձանագրել: Թիֆլիսում հոկտեմբերի սկզբին տեղի ունեցաւ կառավարչապետի խորհրդի նիստը, որին Գօլիցինի բացակայութեան պատճառով, նախագահում էր Ֆրէզէ. երբ խորհրդին ներկայացւում է հայերի մի ահագին ցուցակ, հինգ նահանգապետներ ձայն են տալիս՝ աքսորել, իսկ երեք հոգի — դատաստանական պալատի նախագահը, Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն և խորհրդի անդամ Կրիմգիրեյ, մի խելքը գլխին մարդ, — բողոքում են այդ աքսորների դէմ, համարելով նրանց անփաստացի մեղադրանքներ: Սակայն անօգուտ: Ձայների առաւելութեամբ վճռւեց աքսորել բազմաթիւ անմեղ մարդիկ: Լուր է պտտում, որ այս հարցում Երևանի նահանգապետը, որի մասին լաւ կարծիք կար, վատ դեր է կատարել:

*

Երկու տարի առաջ Վանում ձերբակալուած Վարդգէսը՝ ինչպէս յայտնի է, իբրև յեղափոխական, մահուան էր դատապարտուել տեղական դատարանից: Վճիռը ղրկուած էր Կ. Պոլիս վաւերացնելու համար: Այժմ տեղեկանում ենք, որ Կ. Պոլսի վճռաբեկ ատեանը բեկանել է մահուան դատավճիռը և յանձնարարել է Վանի դատարանին վերստին քննել խնդիրը:

*

Պետերբուրգից հեռագրում են եւրոպական լրագիրներին, որ իշխան Գօլիցին, Կովկասի կառավարչապետը, շուտով կը թողնէ իր պաշտօնը:

*

Հեռագիրները հաղորդում են Պետերբուրգից, որ հայոց բարձր հոգեւորականութիւնը մի աղերսագիր է ներկայացրել ռուս կառավարութեանը, որով „խնդրում է վերադարձնել իրեն Պլեվէի օրով գրաւած եկեղեցական գոյքերը“, որի առիթով Կովկասում պատամբական շարժում և բազմաթիւ տեռօրական փորձեր տեղի ունեցան:

*

Պլեվէին սպանող Սազօնօվը դատապարտուեց յաւիտենական տաժանակիր աշխատանքի: Նրա մեղսակից Կօրսկի դատապարտուեց նոյնպէս տաժանակիր աշխատանքի՝ քսան տարով: Բայց կայսերական մանիֆեստի զօրութեամբ Սազօնօվի պատիժը փոխուեց 14 տարուայ և Կօրսկիինը 10 տարուայ տաժանակիր աշխատանքի:

*

Պլեվէի սպանողների դատավարութեան առթիւ ուսանողները ցոյց կազմակերպեցին Նեվսկի պրօսպեկտի վրայ: Դրօշակներ, թռուցիկներ և այլազան խորհրդանշաններ:

կանչում էին „Պատերազմը դադարեցնե՜լ“, Կորչի՜ բռնապետութիւնը“։ Ոստիկանները ահագին քանակութեամբ դուրս խուժեցին իրենց թաքստից և յարձակեցին ցուցարարների վրայ։ Տեղի ունեցաւ մեծ ընդհարում, որ տևեց մօտ երկու ժամ։ 50 հոգի վիրաւորուեցին։

*

Ներկայ դեկտեմբերի 3-ին Պետերբուրգում կայացաւ ահագին և իր կարևորութեամբ եզակի ճաշկերոյթ, որին նախագահում էր Կորօլենկօ և մասնակցում էին 600-ից աւելի մարդ, գրողներ, գիտնականներ, փաստաբաններ, բժիշկներ եւայլն։ Բազմաթիւ ճառերից յետոյ բոլորի կողմից ընդունուեց ու ստորագրուեց մի որոշում, որի մէջ հաւաստելով ներկայ բիւրօկրատական սիստէմի այլանդակութիւնները՝ պահանջում են իբրև անհրաժեշտագոյն պայմաններ. — մարդկային անձնաւորութեան անբռնաբարելիութիւն, խղճի, խօսքի, մամուլի, ժողովների ազատութիւն. ոչնչացումն ազգային և դաւանական սահմանափակումների, հաւասարութիւն բոլորի համար օրէնքի առջև. ազատ ժողովրդական ներկայացուցչութիւն, մինիստրների պատասխանատուութիւն՝ ժողովրդի ներկայացուցիչների առաջ. անյապաղ գումարումն սահմանադրական ժողովի և լիակատար, անպայման ներումն բոլոր քաղաքական ու կրօնական յանցաւորների համար։

*

Դեկտեմբերի 12-ին Օդեսայի բազմամարդ փողոցներից մէկում սպանութեան փորձ եղաւ այդ քաղաքի ոստիկանապետ Կիզլիակօվսկու վրայ։ Տէռօրիստը, որ հարուածել էր մի սուր գործիքով, անյայտացաւ բազմութեան մէջ։ Ոստիկանապետը տարուեց հիւանդանոց անյուսալի վիճակում։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՆ ստացած է՝

Ռուսաստան. — „Դրամ“ կոմիտէից 7,000 ֆրանք։ Լօզանէն՝ Թէլօ-ից 20 ֆրանք։

Վրիպակ. — № 11 „Դրօշակի“ մէջ հրատարակուած Ալէքսանդրիոյ Կօմ-ի հանգանակութեան մէջ մոռացուած է՝ Ն. Խանճեան 20 ղուրուշ ողջ։

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ քաղաքային Կօմիտէն՝

1904 թւի օգոստոսի ընթացքում. —

Հետեւեալ խմբերից՝ Անդրանիկի երեկոյթից 100 ռուբլի, Մած առաջին ճիւղ 5, Արևան ձոր 16. 50, Արագաքայլ 15, Թաւթառ 10. 50, Վազգէն 5, Վրէժխնդիր 31. 10, Հայրենասէր առաջին 9, բ.-րդ 8, գ.րդ 7. 50, Գոհարիկի երեկոյթից 181. 69, Խիզախ 5. 50, Հայրենասէր դ.-րդ 58, Բամբակի տեղական մարմնից 292. 90, Բամբակից նւէր քարտաշից 100, Բամբակից նւէր ծառայողից 50, Բամբակից նւէր վաճառականից 25, Դումամ խմբ. կոմիտէից՝ հետեւեալ խմբերից՝ Դերոյեան 20. 60, Դերոյեան առաջին ճիւղ 28. 80, եւս 15, բ.-րդ ճիւղ 12. 50, դ.րդ ճիւղ 17. 15, եւս 49. 85, Խարոյկ 55. 35, Խարոյկ առաջին ճիւղից 12. 95, բ.-րդ ճիւղից 16. 75, դ.րդ ճիւղից 8, Վառ կրակ 22. 30, Կծուկ 24. 50, Մած առաջին 10, Շիրվան 6, Աշոտ-երկաթ 29, Կովկաս 7, Հրայր խմբի միջոցով հետեւեալ անձերից՝ Յոյս 50, Տանուտէր 50, Հայկունի 100, Լոյս, Հաւատ, Մուրճ, Շահին 10-նական, Կաթսայ 25, Մի ոմն, Պարզ, Լապտեր, Զաքուշ 5-ական, Սլաք 25, Տուֆլի 10, Մի ոմն 5, Ժամացոյց 100, Օրացոյց 100, Մարզպետ 5, Ռէս 3, Ատրճանակ 25, Թադէոս Վռամշապուհ 8, Զկնապան 25, Մածուն 3, Վարդապետ 3, Կիլիկեան 10, Սուրհանդակ 2, Սարդար 45, Հալլունի թուրը խ. 8, Քեշխունդի Նոր փունջ 6. 45, Հրաբուխ 17. 50, Մահ կամ ազատութիւն բ.-րդ ճիւղ 4, գ.-րդ ճիւղ 12, գ-րդ ճիւղի վիճակախաղից 50, Օղակ խ. 28, Օղակ խմբի միջոցով 145 ռուբլի։ Գումար 2,181 ռուբլի 39 կոպէկ։

1904 թւի սեպտեմբերի ընթացքում. —

Հետեւեալ խմբերէն՝ Հրդեհ 15 ռուբլի, Հայրենիք 8. 10, Շիրվան 4, Բազէ 32. 50, Առիւծ 8, Բաքկէն-Սիւնի 6. 50, Վրէժ 4, Մած բ.-րդ 5, Դալլորիկ 21, Հայրենասէր առաջին 9, բ.-րդ 8, գ-րդ 7, Մած առաջին 15, Խիզախ 7, Արագաքայլ 7. 50, եւս 31. 50, Պոնտոս 10, Կովկաս 5. 30, Շատախ 28, Շղթայ 3. 50, Շիրվան 3. 10, Կրակ 21. 75, Կեանք 8. 50, Ն. Տ. Մ. նւէր 100, Քարքարից (բամբակ) 500, Յոյս 9, Աշուղ 9. 50, Ա. Ա. Յ-ից 25, Հալլունի թուրը 8, Տաւրիզի երեկոյթից 44, Բաքկէն-սիւնի 6. 50, Աւազ քաղաքի հասարակութիւնից նւէր՝ Շղթայ 15, Օ... 25, Բէնիկ 25, Քեռի 25, Աստղիկ 15, Շքր. 15, Սեւիկ 25, Քալաւ 10, Նպատակ 15, Տալլակ 5, Սիւնեցի 5, Ըմբոստ խմբ. 6, Մազնիս խ. 15, Օղակ խ. 26, Ծաղկաձորի խմբերից՝ Կուկունեանց 18. 40 Սուրբ գիւղի Կայծակ 13. 50, Քաղաք. ուսումնարանի աշակ. Փայլակ 10, Դամիրով 6. 25, Վրէժխնդիր 34. 50, Արձագանք 9, Վարդիթեր գիւղի Սարսափ 1. 60, Անմահ 2. 55, Կանաչ գետից 76. 10, Ա. Մ. գիւղից 29, Բ. Գ. գիւղից 30, Մահ կամ ազատութիւն առաջին ճիւղից 21 ռուբլի։ Գումար 1,450 ռ. 15 կոպէկ։

Ընդհանուր գումար 3631 ռուբլի 54 կոպէկ։

ԵԿԵՂԵՑԻԻ Կ. կոմիտէն՝

Հանգանակութեան շարունակութիւնից 550 ռուբլի (ամբողջ հանգանակութեան գումար 4,000 ռուբլի, որի 3450-ը հրատարակուած № 9 „Դրօշակ“-ի մէջ։

Նալբանդի շրջանում հանգանակ. յունիսի 1-ից 1,358 ռուբլի։

Նալբանդ կոմիտէն 1904 թ. փետրվ. 1-ից յուլիսի 31-ը։ Ա. Լ. Խ. 10 ռուբլի, Գալի բուն (ենթակոմիտէ) 3. 10, Օձոտ 4, Սմբատ 25, Աստղիկ խմբ. 7. 88, Փօղոս գիւղից՝ Ս. Բ. 25, Պ. Զ. 5, Պ. Զ. 2, Գերւած գիւղի մի խնջոյքից 17, Նետ խմբ. 5, Բարիսով (ենթակոմիտէ) 6, Անծինծ-խէթ խ. 15, Լուսաւոր խմբ. 16, Թնդանօթ ենթակոմիտէ 9, Գալի բուն ենթակոմիտէ 13. 20, Արծւիկ խմբ. 16, Բարիսովիշ ենթակոմիտէ 5, Նետ խմբ. 140, եւս 2. 50, Սալղ-սու ենթակոմիտէ 25, Մեղու խմբ. 3. 95, Հինգ եղգիշներ 2. 70, Ծ. Գ. Խ. 2, Օձոտ 2, Մովսէս խմբ. 30, եւս 41. 20, Անծանօթ 1, Մարիպոլից 25, Լուսաւոր խմբ. 48. 80, Նետ խմբ. 10, Մեղու խմբ. եւ հինգ եղգիշներ 7. 35, Աստղիկ խմբ. 15, Աշակերտներից 3, Անծանօթից 1, Լուսաւոր խմբ. 8 ռուբլի։ Գումար 552 ռուբլի 68 կոպէկ։

Ընդհանուր գումար 2,460 ռուբլի 68 կոպէկ։

ԺԼԱՏ Կոմիտէն՝

1904 թ. յուլիսից մինչեւ 30 օգոստոս. —

Ժլատի Արարատ խմբ. 45. 50 ռուբլի, Բուժարանի խմբերից Յոյս 10, Աձելի 32. 70, Ամէքսիօն 16, Մնդիկ 8. 30, Լոռեցի 15, Սեւայր 18, Համերգից 165, Ժլատի Առատ ենթակոմիտէի համերգից 70. 83, Ժլատի խմբերից՝ Կրէտացի 24. 30, Լուսաստղ 29 զոյգ սպիտակ, 1 դ. գուլպայ եւայլն, եւս 260, Կտրուկ 10. 42. Ծռանդ 22, Կրակոտ 22. 50, Հզօրիկ 20, Քար 23. 50, Արարատ 27, եւս Ռ. Յ.-ի որդու կնունքից 6. 5, Կրէտացի 21. 40, Բուժարանի 2-րդ համերգից 200, Բուժարանի խմբերից 50, Բուժարանի ծայրերով եւ ծախսերով 134. 45, Առատի ենթակոմիտէից Ղազարոսի հարսանիքից 20. 52, Առատի Ծռանդ խմբ. 24, Թավրիզ 1, Խասքար 1, Ժլատի համերգից 96 ռ.։ Գումար 1,345 ռ. 47 կոպէկ։

ԱՊԱՌԱԺ Կոմիտէն՝

1904 թ. յուլիսից մինչեւ 1 սեպտեմբերի. —

Շահակերտի Մուրճ խմբ. 26. 17 ռուբլի, Գործակատար խ. 133. 64, Միջագետ գիւղի Նիկոլ խմբ. 112. 12, Նոյն գիւղի Քնար խմբ. 20, զանազան աղբիւրներից՝ Աներսից ապարիկ 25, եւս ապարիկ 15, Գործակատար խումբ Արազում Յարութիւնեանի միջոցով հանգանակ. 118. 75, Օրիորդ հայուհու հանգանակածից եւ վիճակախաղից 31. 3, Ս-ից նւէր 200 հատ նօմէր 12 փամփուշտ ատրճանակի։

Սիւնիք ծակածորի ենթակոմիտէն՝ ծակածորի Կապ գիւղի Ազնիւ խմբ. 15, ծակածորի Բարերար Ա. խմբ. 16. 80, Սրբաշէն գիւղի Հոլովոր, Սանասար, Արարատ եւ Որոտան խմբերից 34, ծակածորի հետեւեալ խմբերից՝ Արմատ 7. 80, Լոյս 13, Նամուս 10, Հրաբուխ 7. 12, Կապ գիւղի Ազնիւ խմբ. 25. 30, Փշոտ գիւղի Անի եւ Արշալոյս խմբ. 12. 40, Ղազեան գիւղի Ոյժ, Դաշոյն, Գեղամ, Ծիածան եւ Մուրճ խմբերից 12. 50, Ամրոց գիւղի Մխիթար, Լուսաբեր, Ծաղկաձոր, Կրակ եւ Լոյս խմբերից 13. 85, Սարեւլանջ գիւղի Ծռանդ, Վրէժ եւ փոթորիկ խմբերից 11. 60, Ուխտատեղի գիւղի Անդրանիկ, Յոյս, Հաւատ, Սէր եւ փոթորիկ Ա. եւ Բ. խմբերից 10. 70, Սար գիւղի Արուսեակ խմբ. 6. 30, ծակածորի Բարերար Ա. Բ. Գ. Դ. խմբերից 24, արմատ, Լոյս, Նամուս, Հրաբուխ եւ Սէր խմբերից 34. 90, Ճանապարհ գիւղի Առիւծ խմբ. 32. 50, զանազան աղբիւրներից՝ Կապ գիւղի Յոյսից մի ներկայացման զուտ արդիւնք 42, Խանասորայ յիշատակի

տոմսերու կազմած ցերեկոյթից զուտ արդիւնք 18, Փշոտ գիւղի Հ. Հովիւ 5, Սրբաշէն գիւղի Ոսկերիչ 25, Ուխտատեղում մի ճաշի վրայ հանգանակած 13. 40, Գոհարի հայ հասարակութիւնից հանգանակած յօգուտ կուռդ Սասունի 113, Մի ոմն 2, Սարեւանջ գիւղի Զօրանից 5, Նոյն տեղի հայ հասարակութ. Անդրանիկի սիրոյն 17. 3, Ցոյս եւ Քաջ 6 ռուբլի:

Ընդհանուր գումար 1,015 ռուբլի 79 կոպէկ:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿ. Զրաբերդի Կօմիտէն՝

1904 թ. փետրուարի 22-ից մինչեւ սեպտ. 1-ը.—Անդամավճարներ հետեւեալ խմբերից՝ Արշալոյս 126. 70 ռուբլի, Անթառամ 93. 50, Առիւծ 36. 95, Արաքս 23, Ցոյս 54. 60, Միութիւն 43. 90, Թաթուլ 22. 15, Անդրանիկ 15, Հրայր 24. 50, Թուման 2. 40, Որսորդ Գէորգ 2. 85, Ռուս Գէորգ 2, Ժողովածու 40, առաջին երեկոյթից 110, վիճակախաղից 18, ներկայացումից 100, Թաթուլ խմբի երեկոյթից 103. 13, աշակերտաց երեկոյթից 96. 34, տիկ. Աշ-ի հանգանակած 67. 50, Ն.-ից 6, տիկ. Աշխ-ի ձեռ. 1. 80 ռ., եւ երեք ոսկի, Ս. Փ. 5 ռ., Մ. Տ. Ս. 5, Կ. Ա. 3, Շ. Ն. 3 ռ. եւ մի ոսկի, Մի տիկնոջից 5 ռ., Մի տ-ից 2, բժ. Ջ. 10, Ճամբորդ գիւղում Սիրօյի ձեռամբ հանգանակ. 3. 55, Պ-ի ձեռամբ Կ. Ա-ից 10, տիկ. Ա-էից 27, Տ. Ա-ի հարս. հանգանակ. 8. 80, Մանկ. թատրօնից 4. 50, Ք-ի ձեռամբ Արագած խմբ. 7, Վ. Զ. 5, օր. Տ-ի ձեռամբ հանգ. 8. 53, Պ-ի ձեռամբ Նորածին խմբ. 3. 50, Նոր Արդւինի կանանցից 14. 63, մի Պ-ից 3, հանգ. հարսանիքում 13, Խանզատէի ձեռ. հանգ. 13, Նորածին խմբ. Տ-ի ձեռ. 21. 10, Հ. Ս.-ից Պ-ի ձեռամբ 10, Մանկ. թատրոնից 4. 50, մի խումբ պարոններից 3. 26, Ա. Կ. 15, Ց. Պ-ի ձեռ. 1, Պ. ձեռ. Ջ-ից 2 ռուբլի:

Շ ի կ ա հ ե ր ո ց՝ Ալիք խմբ. 25. 40 ռուբլի, եւս 6. 45, Մ-ի ձեռ. 5. 40, Ը-ի եւ օր. Վ-ի ձեռ. 2. 21, Ցոյս խմբ. 15. 45, եւս 5, Շիկահերում տուած երեկոյթից 50, Ալիք, Ցոյս եւ ցերեկոյթից 100. 79 ռուբլի:

Ոսկանապատի Կ. Խ.-ի մանածիւղից՝ № 11՝ 30 ռուբլի, № 93՝ 80, № 106 (հին հաշւից մնացած) 50 ռուբլի:

Ընդհանուր գումար 1,513 ռուբլի 40 կոպէկ եւ 4 ոսկի:

ԳՈՒԳԱՐՔԻ Ենթակօմիտէն՝

Ցուլիսի ամսավճարներ՝ Եռանդ խմբ. 10 ռուբլի, Ցոյս խմբ. 15, Մեհակ խմբ. 4, Ամարանոց խմբ. 3, Պէծիկ խմբ. Գ. Նազար 1 ռ.: Գումար 33 ռուբլի:

ԲԱԼԿԱՆԵԱՆ Կեդր. Կօմիտէն՝

Փ ի լ ի պ է ի կօմիտէն՝ Մ. Շ. 100 ֆրանք, Խանութ 40, Խաչիկ 100, Կ. Փափազեանի գործաւորներ 20, Անանիկ 10, Գ. Ա. 40, Քարակոփ 5, Շահէն Գետափէն 30, Ն. Ք. 40, Ընդհ. 405 ֆր., Մկրտիչ 4 լէվ, Կ. Զատւշ 5, Սեւմի 5, Սահակ-Ցովնան 4, Ոմն 10, Ծխախոտ 3, Շանթ 10, Ք-ից 10, Պիսակ 10, Արեւ 3, Ոսկեհան 10, Գ. Սարաֆ 5, Ց. Պ.-ից 15, Հ. Ա. Ս. 42, Անդրէաս 3, Գաւազան 5, Ա.-ից 100, Տ. Ս. Գ. 25, Ակա 40, Թ.-ից 40, Թ. Կ. 2, Ցակոբէն 50, Արաքս Արցախ 100, Ց. Կ. 20, Կշիռ 25, Վաճառական 100, Ց. Մ. եղբ. 20, Կ. Մ. Գ. եղբ. 40, Խ. Ս. 2, Ա. Տ. Մ. 10, Ս. Գ. 5, Ց. Նշան 20, Սարգիս 15, Խահուէ 10, Լ. Մինաս 10, Հալած 4, Գր. Դաւիթ 10, Մ. Զպուք. 2, Ռաֆի 20, Քէօհնէ 5, Ց. Գանթար 15, Ց. Չէկտիր 2, Փանոս 10, Մ. Ե. 2, Ա. Ջ. 20, Տ. Պ. Օ. 20, Ց. Ծ. 10, Կ. Է. 100, Ս. Զ. 3, տիկին Աւարայր 10, Ց. Փ. 5, Մարգար 5 լէվ, խ մ բ ե ր է՝ Հեթում-Գագիկ 144. 60 լէվ, Վարդգէս 34, Վրէժի ա. տասնեակ 57, Վրէժի բ. տասնեակ 32, Տարօն 22, Ապիլ-Թաթուլ 40. 50, Հրայր 33, Վազգէն 16, Արեւելեան 38, Մինասեան արձարան 22, Հայկակ 100 լէվ: Գումար 405 ֆրանք եւ 1590 լէվ:

Խումբերու ամսավճար.— Տարօն 27. 50 լէվ, Արիստակէս Զօրեանց 45. 50, Ապիլ-Թաթուլ 170, Անձնուրաց Գայանէքի 25. 70, Տարօն 23. 50, Վազգէն 36. 10, Արեւելեան 18, Վազգէն 26. 20, Վրէժ 163. 50, Հեթում-Գագիկ 42, Արիստակէս Զօրեանց 40, Հեթում-Գագիկ 33, Վասպուրական 60, Արիստակէս Զօրեանց 58, Հեթում-Գագիկ 36, Արիստակէս Զօրեանց 45. 50: Գումար 850 լէվ:

Ս օ ֆ ի ա յ ի ենթակօմիտէն՝ 31 դեկտ. 1903 9 նոյեմ. 1904.— Հետեւեալ խումբերէ՝ Սեպուհ 122 լէվ, Անդրանիկ 14, Թ. Ղարամանեան 68, Արապօ 11· 60, Սերոբ-Աղբիւր 40, Փէդայի նախկին հաշւէն 24, Սերոբ-Աղբիւր 72, Անդրանիկ 16. 50, եւս 10, խընջոյքի մը մէջ 8 ընկերներէ՝ 9, հանգանակութենէն գոյացած 612. 20 լէվ, նուիրատուներն են՝ Սուքիասեան եւ Ստեփանեան 25 լէվ, Թ. Ցակոբեան, Ղուկաս Մինասեան, Մուշեղ Արծրունի, Գրիգոր Օհանէսեան, Մ. Ց. 20-ական, Գէորգ տէր Ցակոբեան, Գալուստ Տօնիկեան, Մկրտիչ Մանուշակեան 15-ական, Պետրոս Մխիթարեան, Սիսակ, Սարգիս Նիկողոսեան, Խաչիկ Սիմօն, Մխիթար Մինասեան, Ցովհ. Մխիթարեան 10-նական, Գրիգոր Գրիգորեան, Ժամացոյց, Ն. Թ., Ս. Հ., Ցարութիւն, Ծ., Ն. Մ., Նիկ. Հ., եղբ. Թ., տոք. Թ., Ցար. Գասպար, Պետրոս Վարդան, Ա. Պապիկ, Աշճի, Մերճան, Մուշեղ, Արիստակէս, Մ. եղբ., Տիգ. Ծերուն, Մ. Թոմաս, Խուրշ. Հոս տեղ, Մելիք Այվազ 5-ական, Տ. Վ. Ք. 10, Արեւ 4, Կ. Քույումճեան 3, Գէորգ 6, Սեւաշեայ 100, Խ. Թ. 3, Վահան եւ Արշակ 15, Խունչիտ 10, Մելքոն Թ. 4, Ցար. Վարդ 2, Խըլկադ 4, Վախկոտ I 15, Վախկոտ II 40, Բ. ասկէր 20, Բարեկամ մը 20. 20, Ոմն Ս. Ք. 10, Ա. Պէլէզիկ, Ոմն, Ոմն, Մարտ Ս., Ա. Սիմ., Ամէն 1-ական լէվ: Գումար 999 լէվ 30 սանտիմ:

Ընդհանուր գումար 405 ֆրանք եւ 2,439. 30 լէվ:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կեդր. Կօմիտէն՝

Մ ի ն ա ր է թ ի հետեւեալ խմբերից՝ Դերիզ 130 ղրան, Բարդուղիմէոս 31. 20, Զարեւանդ 135, Հարաւլ 82, Դերիզի մինջոց. 47. 50, Տարածող 142. 50, Մահ գիւղում մի խնջոյք. հանգանակ. 30 ղրան: Գումար 598 ղրան 20 կոպէկ:

ՆԱԽԱՅԱՆԳՍՏԻ Կեդր. Կօմիտէն՝

Հետեւեալ խմբերից՝ Գազան Տարօնացի 49 ռուբլի, Լուսաբեր 21. 60, Կէրճի 11. 10, Ծովախորշի Բողբոջ 32, Անի 21. 50, Բազրատունեաց 48. 80, Բագրատ. Տապան 25, Հայկազեան 28. 20, Պահանջ 5, Կայծակի օգնու. 29-ի ցերեկոյթից 50, Կայծ 19. 20, Մորակ 9, եւս 10, Կարին 31, Ծովախորշի Բողբոջ 9. 15, Ծրաջան միղու 30, Յեւան 8. 61, եւս 12. 50, անհատներից՝ Փաշայից տուգանք 5, Սուրէնեան 5, Սիմոնեան 5, Ուխտատեղից 6, Ա. Ազիզեան 3, Օգոստ. 29-ի ցերեկոյթից 50, Պ. Թ.-ից տուգանք 10, Դժոխքից եւ Պիղատոսից 2, Սախօյից տուգանք 15, Նոր քաղաքից 64. 75, Դաշտի անցեալ տարուայ հաշւից 49. 80 ռ.:

Ջ ր ա շ է ն ի ց՝ Խամուր բերդ խ. 46 ռուբլի, Ղարիբ խ. 17, Գրգուռ 28, Աւետարան խ. 5, Գեղարդ խ. 6. 50, Թուխ մանուկ խ. 13. 10, Վիշապ խ. 16. 50 ռուբլի:

Կ ա ր մ ի ր ք ա ղ ա ք ի ց՝ թիւ 615՝ 20 ռուբլի, թիւ 616՝ 1500, թիւ 617՝ 200, թիւ 918՝ 150, թիւ 619՝ 500, թիւ 920՝ 1000, թիւ 621՝ 400, թիւ 622՝ 300, թիւ 623՝ 300, թիւ 624՝ 200, թիւ 625՝ 100, թիւ 626՝ 100, թիւ 627՝ 170, թիւ 628՝ 100, թիւ 629՝ 200 ռ.:

Ա ղ քաղաքի մի խումբ նախկին չէզոք համակրողներ 146 ռ.:

Կ լ ո ր ի կ ք ա ղ ա ք ի ց՝ Արթուն խ. 50 ռուբլի, Փիրշաուշ խ. 50, Նեղուցի ծիածան խմբի նուէրներ՝ Կայծակ, Առիւծ, Աշոտ, Արտաշէս 3-ական, Սուրէն 10, Սաքօ 10, Պարոյր 6, Կարօ, Տիրան, Տիգրան, Խորէն, Լեւոն 5-ական, Կարկուտ, Վիշապ, Սարդար, Փարհատ 2-ական, Արծիւ, Վահագն, Կլիճեան, Թուվանկճի, Տիգրան, 1-ական ռուբլի:

Խ ա ռ ն ք ա ղ ա ք ի ց՝ Մնաց 150 ռուբլի, Գնաց 150, Բարակ 200, Արեւելք 100, Արեւմուտք 50, Էր 300, Մեծաղա 100, Իուղաբեր 100, Յ. Բ. 200, Դերձակ 300, Ծխախոտ 200, Մեծատուն 100, Փորր 100, Երկու 100, Աշխատող 100, Պարութ 405, Ռուս համակրողներ 65, Գինի 50, տիկին 25, Վազր 50, Ց. Ս. 50, Կառավարիչ 50, Մէկից 25 ռուբլի:

Ա պ ա ս տ ա ն ի ց՝ Ղարիբ խումբը ստացած է Երկախ եւ Զորգէտ գիւղերից № 106 անդորրագրով 151 ռուբլի:

Ընդհանուր գումար 9,353 ռուբլի 31 կոպէկ:

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ԼՕՅՍ ՏԵՍԱՒ

Ե. ԱԿՆՈՒՆԻ

ԴԷՊԻ ԿՌԻՒ

Բովանդակած 275 երեսից, նուիրւած եկեղեցական կալւածների յափշտակութեան և կովկասահայերի վերջին շարժումներին:

Գինը Եւրոպայում՝ 2 ֆրանկ, Ամերիկա՝ կէս դոլար

Կովկաս՝ 1 ռուբլի:

ՊԱՏՐԱՍՏՍՒՈՒՄ ԵՆ ՍԱՍՈՒՆԻ ՀԵՐՈՍՆԵՐ

ՀՐԱՅՐԻ և ՎԱՀԱՆԻ

Մեծադիր պատկերները, մատչելի գնով, լաւ թղթի վրայ

Դիմել «Դրօշակ»ի խմբագրութեան

Մեր խմբագրութեան հասցէն՝

Rèdaction du „DROSCHAK“, Genève (Suisse)